Գիտություն

ՍԵՊՏԵՄԲԵՐ
№ 9
(226)
2010 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ արտահերթ ընդհանուր ժողովը

ՀՀ նախագահը հանձնեց Վիկտոր ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ անվան միջազգային անդրանիկ մրցանակը



ՀՀ նախագահ Սերժ ՍԱՐԳՍՅԱՆԸ սեպտեմբերի 17-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արտահերթ ընդհանուր ժողովում, որին մասնակցում էին տարբեր երկրներից ժամանած հեռոնակավոր գիտնականներ, շվեյցարացի հայտնի աստղաֆիզիկոս Միշել Մայորին ու նրա գիտական խմբի անդամներ Գարիկ Իսրայելյանին և Նունո Սանտոսին է հանձնել ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային մրցանակը: Մրցանակը հիմնվել է ՀՀ նախագահի 2009 թ. ապրիլի 16-ի հրամանագրով: Այն նպատակ ունի հավերժացնելու մեծ աստղաֆիզիկոսի հիշատակը և խթանելու նրա գիտական ժառանգության զարգացումը: Մրցանակը շնորհվում է երկու տարին մեկ անգամ՝ աստղաֆիզիկայի և դրան հարակից բնագավառներում ակնառու գիտական աշխատանքի համար: Մրցանակային ֆոնդը 500 հազար ԱՄՆ դոլար է:

2010 թ. Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային անդրանիկ մրցանակակիրներին ընտրել է ՀՀ ԳԱԱ-ի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի ղեկավարած միջազգային հանձնաժողովը, որը մինչև այս տարվա մարտի 18-ը ստացել էր ականավոր գիտնականների և գիտական խմբերի 14 առաջադրում աշխարհի տարբեր երկրների ազգային ակադեմիաներից, համալսարաններից և Նոբելյան մրցանակի դափնեկիրներից: Եվ զարմանալի չէ, որ մրցանակակիրները Մ. Մայորն ու նրա գիտական խումբն են: Միշել Մայորն արեգակնային տիպի աստղի շուրջ պտտվող առաջին արտաարեգակնային մոլորակի համահայտնաբերողն է: Բացի այս, նա և խումբը ակնառու ներդրում են կատարել մոլորակային համակարգերի և նրանց կենտրոնական աստղերի հետազոտման բնագավառում:

Շնորհավորելով մրցանակակիր գիտնականներին՝ հանրապետության ղեկավարը նշել է.

- Այսօր ինձ համար մեծ պատիվ և հաճույք է հանձնել Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային մրցանակը: Սա նոր երևույթ է մեր իրականության մեջ: Եվ այն վկայում է Հայաստանի՝ դեպի աստղագիտություն, աստղաֆիզիկա և հարակից գիտություններ ունեցած մեծ հետաքրքրության մասին, այն մասին, թե մեր հասարակական գիտակցության ու կարծիքի մեջ որքան կարևոր են նվաճումներն այս բնագավառում: Այդ կարծիքն ու գիտակցությունը մեզանում ձևավորող ամենախոշոր անհատականությունը համաշխարհային հռչակ և հեղինակություն ունեցող աստղագետ Վիկտոր Համբարձումյանն էր՝ իր ստեղծած Բյուրականի աստղադիտարանով և հիմնած դպրոցով: Հենց նրա բացառիկ կերպարն էր, որ բազմաթիվ հայ երիտասարդների համար դարձավ ոգեշնչող օրինակ, և նրանք ընտրեցին աստղագետի ու աստղաֆիզիկոսի մասնագիտությունները՝ հետագայում արձանագրելով լուրջ հաջողություններ միջազգային ասպարեզներում: Աստղագիտության պատմության օտար մասնագետներն առաջինն էին, որ պատմական Հայաստանի տարածքը համարեցին աստղագիտության ծագման օջախ, աստղագիտության հայրենիք, ապա նոր փաստարկներով նրանց միացան նաև հայ ուսումնասիրողները: Հայաստանում քիչ չեն այն վայրերը, որոնք մասնագետների կողմից մեկնաբանվում են որպես հնագույն աստղադիտարաններ:

Հեռավոր նախնիների գործի փայլուն շարունակողներն են Վիկտոր Համբարձումյանն ու աստղագիտության հայկական դպրոցի մյուս ներկայացուցիչները:

Ուրախ եմ, որ մեր մրցանակը գտել է իր առաջին արժանավոր դափնեկիրներին:

Ես սրտանց շնորհավորում եմ նրանց այս հաջողության համար՝ մաղթում գիտական նոր բացահայտումներ: Սրանով, հարգելի մրցանակակիրներ, մենք ցանկանում ենք ոչ միայն գնահատել ձեր կատարած աշխատանքը, այլև հասարակական լայն հնչեղություն հաղորդել գյուտերին, որոնք ունեն համամարդկային նշանակություն: Մեր պրագմատիկ դարաշրջանում նոր արտաարեգակնային մոլորակների, նրանց կենտրոնական աստղերի հայտնաբերումն ու բնութագրումը, որոնք ուղղակիորեն կապված չեն անմիջական շահ և ֆինանսական օգուտ ստանալու հետ, կարող են շատ ռոմանտիկ զբաղմունք համարվել, բայց մենք համոզված ենք, որ հենց նման գիտական նվաճումներն են, որ մեծ հաշվով ընդլայնել են մեր իմացության սահմանները, ինչպես նաև առաջ մղել մարդկային քաղաքակրթությունը:

Հաճախ կամ հազվադեպ երկնքին նայում են բոլորը, բայց կան մարդիկ, ովքեր երկնքին նայելիս տեսնում են շատ ավելին, քան մենք: Այսօր այս սրահում մենք շնորհավորում և մեծարում ենք հենց այդպիսիներին՝ ժնևի համալսարանի պրոֆեսոր Միշել Մայորին և իր գիտական խմբին, ովքեր տեսան և աշխարհին պատմեցին այն, ինչ աշխարհը դեռ չէր տեսել:

Շնորհակալություն եմ հայտնում մրցույթի կազմակերպիչներին և հանձնաժողովի անդամներին, ովքեր մեծ ծավալի աշխատանք են կատարել և անաչառ կերպով ընտրել լավագույններին: Սաղթում եմ, որ այսուհետ ևս հանձնաժողովը պահի չափանիշների բարձր նշաձողը:

Ոգևորիչ է, որ մրցանակային հիմնադրամի ձևավորման հարցում պետությանը միացել են «Լույս» և «Փյունիկ» հիմնադրամները: Հատուկ շնորհակալություն եմ հայտնում այն մարդկանց, ովքեր հավատացին այս նախաձեռնության հեռանկարային ուժին և իրենց բարեհաճ նվիրատվություններով հնարավոր դարձրեցին այն կյանքի կոչել. այստեղ ես, մասնավորապես, ուզում եմ առանձնացնել Հրանտ Վարդանյանին և Գաբրիել Ջամբարջյանին: Շնորհակալ եմ այս մարդկանց: Ես չափազանց կարևորում եմ, որ այսպիսի միջոցառումներին, պետությունից բացի, մասնակցում են նաև անհատներ:

Վիկտոր Համբարձումյանի անունը կրող մրցանակը պետք է խթանի գիտության զարգացումը, ինչպես նաև արժանի լինի հայ գիտնականի ու հայրենասերի հանճարի մեծությանն ու հիշատակին: Մեծ հեռանկարի մեջ այն հզոր ազդակ է հաղորդելու նաև հայկական աստղագիտության և ընդհանրապես գիտության վերելքին: Այս հավատով ենք հիմնել այս մրցանակը, և ես հպարտ եմ, որ այն արդեն կայացած փաստ է: Այս առթիվ շնորհավորում եմ բոլորիս:

Շնորհակալություն:

Հանրապետության ղեկավարի խոսքով՝ Վիկտոր Համբարձումյանի անունը կրող մրցանակը պետք է խթանի գիտության զարգացումը, ինչպես նաև արժանի լինի հայ գիտնականի ու հայրենասերի հանճարի մեծությանն ու հիշատակին: Նախագահի հավաստմամբ՝ մեծ հեռանկարի մեջ այն հզոր ազդակ է հաղորդելու նաև հայկական աստղագիտության և ընդհանրապես գիտության վերելքին:

«Մեր ուսումնասիրության հիմքում արտաարեգակնային մոլորակներն են: Պետք է հասկանալ, թե ինչպես են մոլորակները առաջանում: Մրցույթի համար մեր կողմից ներկայացրած աշխատանքի հիմքը դա էր : Սկզբնական շրջանում մենք հայտնաբերում էինք մեծ զանգվածներ ունեցող մոլորակներ, սակայն վերջին տարիներին մեր ուսումնասիրությունների հիմքում դնում ենք երկրի զանգվածի մոլորակները»,- նշեց Միշել Մայորը:

Վերջին տասը տարիների ընթացքում մրցանակակիրները բնութագրել են արտաարեգակնային մոլորակներ ունեցող աստղերի ֆիզիկական և քիմիական հատկությունները: Այս խմբի կողմից ստացված արդյունքները մեծ ազդեցություն են թողել մոլորակների առաջացման մոդելների մշակման վրա:

«ԳԳ»

Օրերս լրացավ ականավոր ֆիզիկոս, կիսահաղորդիչների ֆիզիկայի և տեխնիկայի, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, արեգակնային էներգիայի փոխակերպման մեթոդների և կիսահաղորդչային սենսորների բնագավառում ճանաչված մասնագետ, Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակի մրցանակակիր, գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Վլադիմիր Հարությունյանի ծննդյան 70-ամյակը:

Վլադիմիր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - 70

Մեծապատանդ Ֆիզիկոսը



Վլադիմիր Հարությունյանը ծնվել է 1940թ. Երևանում: 1964-ին գերազանցությամբ ավարտում է Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոէլեկտրոնիկայի ֆակուլտետը՝ կիսահաղորդիչներ և դիէլեկտրիկներ մասնագիտությամբ: Այնուհետև աշխատանքի է անցնում Հայաստանի գիտությունների ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանում է 1970, իսկ դոկտորականը՝ 1977 թվականին: 1981 թվականին ստանում է պրոֆեսորի գիտական կոչում, 1990-ին ընտրվում ՀՀ ԳԱԱ թղթակից, իսկ 1996-ին՝ իսկական անդամ՝ ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա մասնագիտությամբ: Վ. Հարությունյանը ընտրվել է նաև ՀՀ ճարտարագիտական ակադեմիայի, ինչպես նաև Միջազգային ճարտարագիտական ակադեմիայի իսկական անդամ, այլ ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ: Նա տեղական և միջազգային մի շարք գիտական և փորձագիտական հանձնաժողովների անդամ է: Երկար տարիներ ԵՊՀ մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալն է և ՀՊՃՀ մասնագիտական խորհրդի անդամ:

1965 թվականից աշխատել է Հայաստանի ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում, ընդ որում 14 տարի շարունակ եղել է կիսահաղորդչային սարքերի ֆիզիկայի լաբորատորիայի անփոփոխ վարիչը: 1977թ. դեկտեմբերին Վ. Հարությունյանը հրավիրվում է Երևանի պետական համալսարան՝ ղեկավարելու ռադիոֆիզիկայի ֆակուլտետի կիսահաղորդիչների և դիէլեկտրիկների ֆիզիկա ամբիոնը և կիսահաղորդչային նյութերի և սարքերի գիտահետազոտական լաբորատորիան: Հետագայում Վ. Հարությունյանի նախաձեռնությամբ ամբիոնը վերանվանվեց կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկայի ամբիոն, իսկ գիտահետազոտական լաբորատորիայի հիման վրա ստեղծվեց կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների գիտական կենտրոնը:

Ակադեմիկոս Վ. Հարությունյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը շատ լայն է: Նրա գիտական աշխատանքներին բնորոշ է հիմնարար հետազոտությունների և կիրառական բնույթի մշակումների համադրումը: Ներկայումս Վլադիմիր Հարությունյանի և համահեղինակակիցների հետաքրքրության կենտրոնում են մի կողմից կիսահաղորդչի և մյուս կողմից էլեկտրալիտի, գազի կամ հեղուկ բյուրեղի բաժանման սահմանում, ինչպես նաև կիսահաղորդչային տարատեսակ հետերոանցումներում (որոնց թվում նաև քվանտային փոսեր և կետեր պարունակող) ընթացող զանազան էֆեկտները, ֆիզիկական երևույթները և այլ ժամանակակից հիմնախնդիրներ: Իր ղեկավարած կոլեկտիվի հետ միասին նա ծանրակշիռ ներդրում ունի կիրառական գիտությունների համար առանձնահատուկ կարևորության այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են քիմիական և գազային սենսորները, սպեկտրի ինֆրակարմիր և ուլտրամանուշակագույն տիրույթի ֆոտոընդունիչները, ԳԲՀ տիրույթի ռադիոֆիզիկական կիսահաղորդչային սարքերը: Ծանրակշիռ ներդրում ունի Վ. Հարությունյանը արեգակնային էներգիան քիմիականի կամ էլեկտրականի փոխակերպելու գործում: Կիսահաղորդիչների և կիսահաղորդչային սարքերի ներքին աղմուկների տեսության ասպարեզում գործընկերների հետ նրա կողմից լուծվել են վիճակագրական ռադիոֆիզիկայի բավական բարդ խնդիրներ: Աշխատակիցների հետ համատեղ կատարված հիմնարար հետազոտությունների գործնական արդյունքը նոր սարքերի, սարքավորումների տեխնոլոգիաների և չափման մեթոդների ստեղծումն է, որոնցից շատերը ամրագրված և պաշտպանված են նախկին ԽՍՀՄ, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հեղինակային իրավունքի 36 վկայականներով, ԱՄՆ-ի 1 և Ֆրանսիայի 2 պատենտներով: Այդ մշակումները որպես կանոն իրենց պարամետրերով գերազանցում են արտասահմանյան նմանակներին: Մի շարք մշակումներ ներդրվել են Հայաստանում և Ռուսաստանի Դաշնությունում (Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ): Նախքան ԽՍՀՄ փլուզումը Վ. Հարությունյանը ղեկավարում էր «Պոզիստոր» արտադրական միավորումում ԵՊՀ հետ համատեղ իր իսկ կողմից ստեղծված ճյուղային լաբորատորիան, ինչը նպաստեց գիտական հետազոտությունների և հայտնագործությունների բազմաթիվ արդյունքների ներդրմանը, արտադրության մեջ արտադրանքի օգտակար ելքի բարելավմանը:

Վ. Հարությունյանը հրատարակել է 3 մենագրություն և մի շարք գրքեր: Գիտական առաջատար ամսագրերում և միջազգային գիտաժողովների նյութերում վերը թվարկած բոլոր բնագավառներում Վ. Հարությունյանը հրատարակել է 14 ակնարկային հոդվածներ, մոտ 400 հոդվածներ և զեկուցումներ, որոնք բարձր գնահատականի են արժանացել տարբեր երկրների առաջատար գիտական հասարակայնության կողմից: Դրա մասին են վկայում մոտ 800 հղումները նրա աշխատանքներին, այդ թվում նաև արտասահմանում հրատարակված գրքերում և մենագրություններում: Վ. Հարությունյանը ակտիվ փորձագիտական աշխատանքներ է կատարում զանազան փորձագիտական խորհուրդներում և արտասահմանյան (ԱՄՆ, Եվրամիություն, Ռուսաստանի Դաշնություն, Շվեյցարիա) մի շարք ամսագրերի, ինչպես նաև «Հայկական բանակ» ամսագրի համար: 1992 թվականից «Տեղեկագիր ՀԳԱ, Ֆիզիկա» ամսագրի գլխավոր խմբագիրն է, որը անգլերեն թարգմանված ամբողջովին հրատարակվում է «Շպրինգեր» (Գերմանիա) հրատարակչության կողմից «Journal of Contemporary Physics» անվամբ: 2007 թ. նա նաև «Amenian Journal of Physics» էլեկտրոնային ամսագրի գլխավոր խմբագիրն է, ուր տպագրվում են ոչ միայն Հայաստանի, այլև մոտ 20 երկրների ֆիզիկոսների աշխատանքները:

Ինտենսիվ գիտական գործունեության հետ միասին Վ. Հարությունյանի ուշադրության կենտրոնում միշտ էլ եղել է կադրերի դաստիարակման և պատրաստման խնդիրը: ԵՊՀ-ում աշխատելու ընթացքում տարբեր տարիների նա դասավանդել է «Կիսահաղորդիչների և կիսահաղորդչային սարքերի ֆիզիկա», «Օպտոէլեկտրոնիկա», «Կիսահաղորդչային ԳԲՀ էլեկտրոնիկա», «Միկրոէլեկտրոնիկա», «Սենսորներ», «Նանոտեխնոլոգիա», «Արեգակնային էներգիայի փոխակերպիչներ» և այլ առարկաներ: Հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակել է ուսումնական ձեռնարկներ:

Ակադեմիկոս Վ. Հարությունյանի գիտական և գիտակազմակերպչական գործունեությունը մեծապես նպաստել է Հայաստանում բարձր որակավորման կադրերի պատրաստմանը: Նրա գիտական ղեկավարությամբ պատրաստվել են գիտությունների 5 դոկտորներ և 30 թեկնածուներ: Նա նորանկախ Հայաստանի առաջին ԲՈՀ-ի անդամ էր: Աշխատակիցների հետ միասին միայն Հայաստանում Վ. Հարությունյանը կազմակերպել է 6 համամիութենական և 10 հանրապետական գիտաժողովներ: Նրա ղեկավարությամբ և ակտիվ մասնակցությամբ Հայաստանում հիմք դրվեց «Կիսահաղորդչային միկրո- և նանոէլեկտրոնիկա» միջազգային արտագնա գիտաժողովներին, որոնք պարբերաբար անցկացվում են 2 տարին մեկ՝ սկսած 1999թ.:

Ակադեմիկոսը մեծ ուշադրություն է հատկացնում միջազգային համագործակցությանը: Նա հեղինակ է շուրջ 70 համատեղ հոդվածների և զեկուցումների ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Շվեդիայի, Գերմանիայի և Իտալիայի գիտնականների հետ: 4 պատենտների հեղինակ է: Բազմաթիվ անգամներ երկարաժամկետ գիտական գործուղումների է մեկնել ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Մեծ Բրիտանիա և այլ երկրներ, մասնակցել է գիտաժողովների, շատ անգամ որպես հրավիրված զեկուցող: ԵՊՀ իր ղեկավարած ամբիոնում և գիտական կենտրոնում կատարվել և կատարվում են համատեղ հետազոտություններ՝ այդ թվում արտասահմանյան ավելի քան 15 դրամաշնորհների շրջանակում:

Արեգակնային էներգիայի և նյութագիտության միջազգային գիտական ընկերությունների անդամ է:

Առողջ ստեղծագործական կոլեկտիվի ձևավորման և պահպանման, գիտական բեղմնավոր դպրոցի ստեղծման և միջազգային կապերի հաստատման համար բացի գիտական բարձր մակարդակից և կատարվող հետազոտությունների արդիականությունից մեծ նշանակություն ունեն նաև Վ. Հարությունյանին որպես անհատականություն բնութագրող անձնական որակները: Առաջին հերթին, դա խորը գիտելիքների առկայությունն է, ինտուիցիան, աշխատասիրությունը, պատասխանատվության բարձր զգացումը, նպատակամղվածությունը, անսպառ աշխատանքային էներգիան, ընկերասիրության և բարի կամեցողության հետ զուգորդված սկզբունքայնությունը:

Գիտության մեջ ունեցած մեծ ձեռքբերումների և կադրերի պատրաստման գործում մատուցած մեծ ծառայությունների համար ակադեմիկոս Վ. Հարությունյանին շնորհվել է «Անանիա Շիրակացի» կառավարական մեդալ: Նրա գործունեությունը 2009 թ. նշվել է ՀՀ վարչապետի շնորհակալությամբ:

Պարգևատրվել է «Համաշխարհային գիտության մեջ ներդրման համար» շքանշանով (2006, Ռուսաստան), «ArmTech' 09» մեդալով (ԱՄՆ):

Շնորհավորելով Վլադիմիր Հարությունյանին 70-ամյա հոբելյանի առթիվ, ցանկանում ենք նրան քաջ առողջություն, երջանկություն և բարեկեցություն անձնական կյանքում, հաջողություններ աշխատանքում և բոլոր գործերում՝ ի շահ Հայաստանի գիտության զարգացման:

Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ
Յուրի ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար

Ակադեմիական նոր հրատարակություններ

1. Հ. Մարության, Հայ ինքնության պատկերագրություն (ցեղասպանության հիշողությունը և ղարաբաղյան շարժումը):
2. H. Marutyan – Iconography of Armenian Identity (The Memory of Genocide and the Karabagh Movement):
3. Հեղ.կոլեկտիվ, Հովհաննես Թումանյանի կյանքի և գործունեության տարեգրություն (1869-1908թթ.):
4. Ս. Սարգսյան, Կանչ (ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանի ծնդյան 80-ամյակի առթիվ):
5. Ա. Սեդրակյան, Զինվորական հանցագործությունները որպես ռազմական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ (քրեաիրավական և քրեաբանական հետազոտություն):
6. **Н. Айрапетян, Фонетика. Орфоэпия. Орфография (Практическое пособие)**
7. Ռ. Համբարձումեան, Ղարաքիլիսայի ճակատամարտը՝ հաղթանակի վերածող ոգի:
8. **Авт. Коллектив, Араратская кощениль.**
9. **С. Амбарцумян, М. Белубекян – Прикладная микрополярная теория упругих оболочек.**
10. Գ. Կիրակոսյան, Արևելյան Հայաստանի բնակչության սոցիալական կառուցվածքը XIX դ. 80-90-ական թվականներին:
11. Ա. Հակոբյան, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում:
12. **Г. Геворкян, Философия. Наука. Культура.**

ՀՀ ԳԱԱ-ում կստեղծվի «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում կստեղծվի ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարատադրական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն: Կենտրոնը կհիմնվի «Կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտ» բաժնետիրական ընկերության և ՀՀ ԳԱԱ «Միկրոբիոլոգիայի և մանրէների ավանդադրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միաձուլումից: Կենտրոնի ստեղծումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2010 թ. հուլիսի 8-ի 1051-Ն որոշման 3-րդ և 9-րդ կետերով: Սույն թվականի սեպտեմբերի 8-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունը որոշում ընդունեց կարճ ժամկետներում անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել կենտրոնի ստեղծման համար:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը

Գաբրիելլա ՈՒԼՈՒՀՈՋՅԱՆ

Գաբրիելլա Ուլուհոջյանը ծնվել է Իտալիայում 1934թ., Արևմտյան Հայաստանից մազապուրծ հայ գաղթականի ընտանիքում:

Նախնական կրթությունը ստացել է Իտալիայի պետական գիմնազիայում, այնուհետև ընդունվել է Միլանի Կաթողիկե համալսարանի դասական բանասիրության ֆակուլտետ և խորացել հունա-լատինական մասնագիտության մեջ:

Գաբրիելլա Ուլուհոջյանը այդ տարիների մեծ հայագետ Ջանկարլո Բոլոնեզի ղեկավարությամբ ուսումնասիրել է հունական դպրոցի երկերը, մասնավորապես բյուզանդացի բանաստեղծ Գեորգ Պիսիդեսի «Վեցօրյա» հայերեն թարգմանությունը՝ համեմատելով այն հունարեն բնագրի հետ: Սա էլ դարձավ Գաբրիելլա Ուլուհոջյանի ատենախոսության թեման, որը նա փայլուն պաշտպանեց 1958թ. և ստացավ դոկտորի գիտական աստիճան:

Գաբրիելլա Ուլուհոջյանը մասնակցեց և հաղթեց պետական մրցույթում, որից հետո միայն ստացավ իր պաշտոնը իտալական պետական լիկեոներում, որտեղ 13 տարի դասավանդեց հին հունարեն և լատիներեն:

Գաբրիելլա Ուլուհոջյանը երբեք չէր մոռանում իր արմատների մասին և առաջին իսկ հնարավորության դեպքում գալիս էր Հայաստան՝ փորձի փոխանակման նպատակով: Առաջին անգամ նման առաքելությամբ նա Հայաստան այցելեց 1972-73թթ. տասն ամսով, իսկ երկրորդ անգամ՝ 1979-1980թթ. Սփյուռքի կոմիտեի աջակցությամբ: Աշխատեց Հայաստանում որպես ստաժոր:

Այս ընթացքում Գաբրիելլա Ուլուհոջյանը հաճախեց Երևանի պետական համալսարան, ուսանեց գրաբար, արևելահայերեն, հայ հին և ժամանակակից գրականություն: Միևնույն ժամանակ առանձին հետազոտություններ էր կատարում Մ.Մաշտոցի անվան Մատենադարանում՝ ուսումնասիրելով Բարսեղ Կեսարացու «Գիրք Հարցողաց» հայերեն թարգմանության ձեռագրերը, հետագայում նա այդ երկը պատրաստեց գիտահամեմատական հրատարակության համար:

1979-1989թթ. Ուլուհոջյանը համագործակցել է Միլանի Հայ ուսումնասիրության և վավերագրումի կենտրոնի հետ, որի ընթացքում երկու անգամ մասնակցել է կենտրոնի կազմակերպած գիտարշավներին, մեկնել Իրան և կատարել հետազոտական աշխատանքներ: Գիտարշավի ժամանակ ուսումնասիրել է հայերեն վիմագիր արձանագրությունները, որի արդյունքում հրատարակել է մի մենագրություն, որը նվիրված էր Ս.Ստեփանոս Նախավկա վանքի արձանագրությունների հավաքածուին:

Գաբրիելլա Ուլուհոջյանը 1973-ից մինչև 1982թ. Բոլոնիայի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում դասավանդել է հայոց լեզու և գրականություն: Իսկ 1982թ., հաղթելով պետական մրցույթում, դարձել է հայագիտության ամբիոնի վարիչ. նախ ղեկավարել է լեզվագիտության, ապա միջնադարյան պատմության բաժինները: Այդ տարիների ընթացքում Գաբրիելլա Ուլուհոջյանին հաջողվեց ամրապնդել Բոլոնիայի համալսարանում հայոց լեզվի ուսումնասիրության մակարդակը, նրա ջանքերով հիմնվեց համապատասխան գրադարան:

Որպես իսկական մանկավարժ՝ նա կարողացել է պատրաստել արժանի հետևորդներ: Նրա ուսանողներից հինգը պաշտպանեցին դոկտորական ատենախոսությունները, իսկ նրանցից երկուսը իրենց կայուն տեղը զբաղեցրին նույն համալսարանում: Մեկը՝ Վալենտինա Կալզոլարին է, մյուսը՝ Աննա Սիրիյանը:

Գաբրիելլա Ուլուհոջյանը դարձավ Հայ ճարտարապետական վավերագիրների շարքի խմբագրության, միջազգային և իտալական բազմաթիվ ընկերակցությունների, Հայկական հետազոտությունների միջազգային ընկերակցության անդամ և մասնակցեց Պո-Արաքս ընկերության հիմնադրմանը: 1991–ից Revue des Etudes Armeniennes գիտական խորհրդի անդամ է: Բարձր գնահատելով Գաբրիելլա Ուլուհոջյանի ներդրումը հայագիտության զարգացման մեջ 1996թ. ՀՀ ԳԱԱ-ն նրան շնորհեց պատվավոր դոկտորի կոչում:

Հատկանշական է, որ Գաբրիելլա Ուլուհոջյանը մանկավարժական և գիտական գործունեությանը զուգընթաց մեծ ավանդ ունի Բոլոնիայի և Երևանի պետական համալսարանների միջև դասախոսների փոխանակման և ծրագրերի համակարգման ոլորտում: Իսկ 1988թ. նրա ջանքերով երկու համալսարանների միջև ստորագրվեց պայմանագիր, որը վերաստորագրվեց 1997թ.՝ Բոլոնիայի համալսարանի ռեկտորի Հայաստան կատարած այցի ժամանակ: Այդ պայմանագրի շնորհիվ մինչ այսօր մոտ երկու տասնյակ գիտնականներ և դասախոսներ (յուրաքանչյուր կողմից) փոխայցելություններ կատարեցին Երևան և Բոլոնիա, իրականացրին փորձի փոխանակում և ավելի խորը ճանաչեցին միմյանց:

Գաբրիելլա Ուլուհոջյանի շնորհիվ ՀՀ ԳԱԱ-ն համագործակցության եզրեր է գտել Թորինոյի և Վենետիկի համալսարանների հետ, նրա ջանքերով կազմակերպվել է հայագիտական ցուցահանդեսներ, գիտաժողովներ: Դրա լավագույն օրինակ են՝ 1979թ. Միլանի Կաթողիկե համալսարանում կայացած հայատիպ գրքերի ցուցահանդեսը, 1981թ. և 1988թ. Միլան-Վիչենցա-Վենետիկում հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումը, 1998թ. Armin Wegner-ին նվիրված ցուցահանդեսը՝ կազմակերպված Ռավեննայի և Բոլոնիայի համալսարաններում:

Գաբրիելլա Ուլուհոջյանը հայագիտական թեմաներով զեկուցումներ է կարդացել Իտալիայում, Հայաստանում և միջազգային տասնյակ գիտաժողովներում, հեղինակ է ութ մենագրությունների, 70-ից ավելի գիտական հոդվածների:

Հաշվի առնելով Գաբրիելլա Ուլուհոջյանի գիտական և մանկավարժական մեծ ավանդը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը, ՀՀ գրտությունների ազգային ակադեմիան 2008 թվականին նրան ընտրեց ԳԱԱ արտասահմանյան անդամ: Գաբրիելլա Ուլուհոջյանը այսօր ևս շարունակում է մեծ ջանքեր ներդնել հայագիտության զարգացման գործում և հաջողությամբ համագործակցել Հայաստանի գիտական կաճառի հետ:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
պ.գ.թ. դոցենտ, ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի գիտաշխատող

Մրցույթ ՀՀ ԳԱԱ համակարգի ասպիրանտների համար

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը և ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամը հայտարարում են մրցույթ ճշգրիտ, բնական և տեխնիկական գիտությունների բնագավառներում ՀՀ ԳԱԱ համակարգի ասպիրանտների համար: Սա առաջին մրցույթն է, որն իրականացվում է «Ասպիրանտական հետազոտությունների աջակցություն-2010» ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է հնարավորություն ընձեռել սկսնակ հետազոտողներին իրականացնել բարձր մակարդակի հետազոտական աշխատանքներ:

Մրցույթի արդյունքները նախատեսվում է հայտարարել 2010 թ. դեկտեմբերի 1-ին:

Ռուսաստանը կկառուցի իր կոլայդերը

Մոսկվայի մերձակայքում, որոշ ժամանակ հետո հնարավոր է, որ կառուցվի ավելի ժամանակակից և առավել հզոր արագացուցիչ, քան է ադրոնային մեծ կոլլայդերը, որը տեղակայված է Ֆրանսիայի և Շվեյցարիայի սահմանում: Ի դեպ, վերջինիս գործարկումը վերջին շաբաթներում վիթխարի արձագանք ունեցավ ողջ աշխարհում: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի միջուկային հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Վիկտոր Մատվեևը վերջերս տված հարցազրույցում հայտարարեց, որ մոլորակի շատ մասնագետներ ակտիվորեն քննարկում են գծային մեծ կոլլայդերի ստեղծման հեռանկարը: Նախագիծը կարող է վերստեղծել «Մեծ պայթյունը», որի հետևանքով գոյացել է տիեզերքը, և ցույց տալ, թե ինչպես սկսեց ձևավորվել Արեգակնային համակարգը:

Այն իրենից պետք է ներկայացնի երկու գծային երկար արագացուցիչներ, որոնք էլ պետք է առաջ մղեն մասնիկները: Կոլլայդերի ստեղծմանը պատրաստ են մասնակցելու աշխարհի բազմաթիվ ֆիզիկոսներ: Գծային մեծ կոլլայդերը Մոսկվայի մարզում կառուցելու առաջարկությունը արել են ՌԴ ԳԱ միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի գիտնականները: Նշենք, որ 30 կիլոմետր երկարությամբ գծային վիթխարի կոլլայդերը հենց Դուբնայում կառուցելու գաղափարը ՌԴ ԳԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, ականավոր ֆիզիկոս ՌԴ ԳԱ միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի երկարամյա տնօրեն Ալեքսեյ Սիսակյանի նվիրական երազանքն էր, որի համար նա հսկայական ջանքեր էր գործադրել, և որը իրականություն է դառնում նրա վաղաժամ մահից հետո:

Ինչպես նշել է ինստիտուտի տնօրեն Վիկտոր Մատվեևը, արտասահմանում շատ լուրջ են վերաբերվել ռուս գիտնականների առաջարկությանը և անմիջապես պատվիրակություններ ուղարկել մերձմոսկովյան Դուբնա: Ռուս ֆիզիկոսների գաղափարը մանրակրկիտ քննարկվել է արտասահմանյան փորձագետների կողմից: Տեղանքը, որը հարմար է նախագծի իրականացման համար, արդեն հետազոտված է: Արագացուցիչի պատրաստման կոմիտեի արտասահմանցի հյուրերը շատ գոհ էին տեսածով և լսածով:

Իհարկե, մոտ ժամանակներս կառույցի շինարարությունն սկսելու հնարավորությունը իրական է, եթե, անշուշտ, մերձմոսկովյան իշխանությունները չեն վախենա նախադեպից, երբ շուտ տպավորվող և մանավանդ միջուկային ֆիզիկայից գաղափար չունեցող տարբեր երկրների բազմահազար մարդիկ կհայտարարեն, որ արագացուցիչը գլխավոր փորձի հետևանքով՝ «սև խոռոչը» կուլ կտա երկիր մոլորակը: Այս առումով պետք է չմոռանալ, որ ադրոնային մեծ կոլլայդերի գործարկման նախօրյակին, արագացուցիչում աշխատող գիտնականների վրա հսկայական ճնշում գործադրվեց: Բանը նույնիսկ հասավ հեռախոսային սպառնալիքների, դատական հայցերի, որոնց օգնությամբ հայցվորները փորձում էին հասնել նախագծի արգելմանը:

Վիկտոր Մատվեևը համոզված է, որ ռուսական գծային մեծ կոլլայդերի առկայությունը թափ կհաղորդի հիմնարար հետազոտությունների զարգացմանը՝ թռիչք կատարելով բարձր տեխնոլոգիաների ոլորտում: Եվս մեկ պլյուս՝ ռուսական ֆիզիկան կհամալրվի երիտասարդ մասնագետներով, որոնք կընդգրկվեն այս վիթխարի նախագծում:

Չէ որ ռուսական գիտության համար, որը վաղուց թարմ արյան կարիք ունի, մասնագետների հետագա կորուստը պարզապես անթույլատրելի է: Բացի այդ, Ռուսաստանում մոլորակում իր նմանը չունեցող կոլլայդերի կառուցումը նաև պատվախնդրության նախագիծ է: Իրականացնելով այն, Ռուսաստանը կապացուցի, որ նրա գիտական ներուժը արտակարգ բարձր է և համահունչ՝ պետության քաղաքական և տնտեսական ամբիցիաներին:

Հայաստանը՝ հնագույն աստղագիտական կենտրոն

Հայ-բրիտանական «Քարեր և աստղեր» ծրագրի հայաստանյան արշավախմբի գլխավոր գիտական խորհրդական Վաչագան Վահրադյանն արդեն երկար ժամանակ հետազոտում է Քարահունջը: Հետազոտություններով բացահայտվել են հուշարձանի և Կարապի համաստեղության կապը, հուշարձանի . աստղագիտական նշանակության վարկածն ու կապը անգլիական Սթոունհենջի հետ: Սրանք ու էլի մի շարք փաստեր Վահրադյանն ուղարկել է Օքսֆորդի համալսարան. պատասխանը չի ուշացել, փաստերը հետաքրքրական են, համագործակցությունը՝ անհրաժեշտություն:

Վերջին շրջանում գրեթե ամեն շաբաթ Վահրադյանը նոր բացահայտումներ է արել: Նա համոզված է, որ հայկական Քարահունջն ավելի հին ծագում ունի, քան Սթոունհենջը:

Հնագետները Քարահունջին վերագրում են 3800-ամյա պատմություն՝ հենվելով այնտեղ հայտնաբերված իրերի վրա, մինչդեռ Վահրադյանի մաթեմատիկական և աստղագիտական հաշվարկների հիման վրա Քարահունջն ունի շուրջ 7000-ամյա պատմություն:

Զուգահեռներ անցկացնելով Քարահունջի և Սթոունհենջի միջև, Վահրադյանը շեշտում է երկու կառույցների նմանությունը: Հայկական և բրիտանական կառույցներում հստակ ուրվագծվում են դեպի հյուսիս-արևելք ուղղված քարե միջանցքները, որոնք հնարավորություն են տալիս պարզելու ամառային արևադարձի օրը: Նրա ներկայացմամբ, սա փաստում է, որ երկու կառույցների հեղինակներն էլ միևնույն մշակութային արժեքների կրողն են և լավ տիրապետել են աստղագիտությանը:

Վահրադյանը մեջբերում է Տրոյան հայտնաբերած Հենրիխ Շլիմանի խոսքերը. «Եվրոպայի ողբերգությունն է, որ իր քաղաքակրթության հիմք ընդունեց ոչ թե հայկական, այլ հին հունական մշակույթը»: Շլիմանը ոչ միայն հավասարեցնում էր երկու մշակույթները, այլև նախապատվությունը տալիս էր հայկականին: Հայկական մշակույթի և հին շրջանում քաղաքակրթության առաջնորդողի լավագույն օրինակներից մեկն էլ Արևմտյան Հայաստանի Պորտասար վանական համալիրն է: Համադրելով երեք կառույցների լուսանկարները, քարերի ձևն ու համաստեղությունները, Վահրադյանը փաստում է, որ հուշարձանները կարծես միմյանց շարունակությունը լինեն: Երեք կառույցների քարերի վրա պատկերված է համաստեղությունների բաժանված աստղային երկինքը՝ Անգղի (Կարապի) համաստեղության շուրջը: Հնագետ Կարլ Շմիդտը կառույցին վերագրում է 12.000 տարվա պատմություն, ինչը փաստում է, որ Հայկական լեռնաշխարհում՝ Աստղային երկինքը համաստեղությունների էր բաժանված 12.000 տարի առաջ:

Այսօր թուրքերը հայկական Պորտասար վանական համալիրն անվանում են Turkish Stonehenge և ներկայացնում որպես թուրքական աստղագիտության ժառանգություն: Թուրքական խեղաթյուրման դեմ գիտնականները ոչինչ չեն ձեռնարկում:

Մոտ օրերս Հայաստան կժամանի Օքսֆորդի համալսարանի պատվիրակությունը՝ աշխարհագրագետ, հոգեբան, մաթեմատիկոս, աստղաբաններ: Պեղումները կտևեն շուրջ 2 շաբաթ:

Մինչ գիտնականը փորձում է աշխարհին մատուցել Քարահունջի հսկայական արժեքը, այնտեղ մարդիկ ոչխար են արածեցնում: Թեպետ կառույցն ընդգրկված է հուշարձանների պահպանման ցանկում, սակայն ոչ միայն անվտանգությունը, այլև պահակի ներկայությունն ապահովված չէ: Անտարբերության պարագայում հուշարձանի 35-րդ քարը վերջերս գողացել են:

Համլիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

«Պատմաբանասիրական հանդես»-ի երկրորդ համարը

Օրերս ընթերցողներին հասավ «Պատմաբանասիրական հանդես»-ի այս տարվա երկրորդ համարը, որը, ինչպես սովորաբար լինում է, հարուստ է թեմաների, նյութերի, գիտական նյութերի բազմազանությամբ և հատկապես հետաքրքիր կոչվելու ճշմարիտ հայտով:

Հանդեսի «Հոդվածներ, հաղորդումներ» բաժինը բացվում է ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի «Խաչատուր Լազարյանի կյանքի համառոտ ուրվագիծը (1789-1871 թթ.)» ուսումնասիրությամբ, որը նվիրված է Լազարյանների համբավավոր տոհմի նշանավոր շառավիղներից մեկին՝ Խաչատուր (Խրիստաֆոր) Լազարյանին: Խորհուրդ ենք տալիս կարդալ սույն հոդվածը, որը ուշագրավ և մանավանդ նորահայտ փաստեր է պարունակում մեծահամբավ հայ գործչի մասին:

Այս բաժնում տեղ են գտել նաև «Սփյուռքահայությունը և Հայկական հարցի լուծման խնդիրը 1945-1947 թթ.» (Քրիստինե Մելքոնյան), «Նախընտրական պայքարը Վանում և 1908 թ. խորհրդարանական ընտրությունները օսմանյան Թուրքիայում (Ավետիս Հարությունյան) հետաքրքիր հրապարակումները:

II բաժինը այս անգամ առատ է լեզվաբանության և լեզվի հարցերին նվիրված հրապարակումներով: Քանի որ բոլորի մասին խոսել հնարավոր չէ, կուզեինք ձեր ուշադրությունը հրավիրել Տիգրան Սիրունյանի, Արտեմ Թորոսյանի և Շողիկ Ղուկասյանի, Գոհար Նիկողոսյանի, Ալեքսանդր Բոժկոյի (Կիև) և այլոց հրապարակումների վրա:

«Հրապարակումներ» բաժնում հանդեսը ընթերցողին է առաջարկում Անուշավան Զաքարյանի «Լեոյի հոդվածաշարը Հայոց ցեղասպանությունը ժխտելու թուրքերի փորձերի դեմ» (ծննդյան 150-ամյակի առթիվ) հոդվածը, Ալվարդ Ղազիյանի և Ա. Ա. Մկրտչյանի «Լեռնային Ղարաբաղի տեղանունների մասին» հոդվածի հրապարակման առթիվ (ռուս.) հրապարակումը:

«Գրախոսություններ» բաժնում արժևորման և գնահատանքի լրջախոհ կարծիքներ են տեղ գտել տարբեր թեմաներով նոր լույս տեսած գրքերի և աշխատությունների մասին: Հեղինակների թվում են Աշոտ Մելքոնյանը, Աելիտա Դոլուխանյանը, Ալվարդ Ղազիյանը, Արսեն Ավագյանը, Արթուր Ավագյանը, Լևոն Ղազարյանը և ուրիշներ:

«Լրատու» բաժնում հանդեսը անդրադարձել է ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովին, տպագրել Հրանտ Քոչարյանի «ՀՀ ԳԱԱ հայագիտություն և հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը» հաղորդումը և Արտակ Մաղալյանի ու Կամո Սուքիասյանի «ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի XXXI գիտական նստաշրջանը» հաղորդագրությունը:

Մենք փորձեցինք շատ համառոտ ընթերցողին ներկայացնել «Պատմաբանասիրական հանդեսի» 2010 թվականի երկրորդ համարի բովանդակությունը, քանի որ մեր խնդիրը չէ անդրադառնալ հանդեսում տեղ գտած բոլոր հրապարակումներին: Մենք պարզապես ուզում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել և խորհուրդ տալ ձեռքն առնել հանդեսը և ընթերցել: Հավատացնում ենք՝ ընթերցողը այնտեղ կգտնի շատ հետաքրքիր և բովանդակալից հրապարակումներ:

ԼԵՆԴՐՈՇ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

Մեր ընկերոջ հիշատակին



Կյանքի 84-րդ տարում վախճանվեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հնագույն աշխատող, Հայրենական մեծ պատերազմի մասնակից, շքանշանակիր, բազմաթիվ բարձրագույն պատվոգրերի, շնորհակալագրերի արժանացած, անվանի պոլիգրաֆիստ Լենդրոշ Ազիզբեկյանը:

Լենդրոշ Ազիզբեկյանը ծնվել է 1926 թվականին, Էջմիածնի շրջանի Գեղակերտ գյուղում: 1944-ին միջնակարգ դպրոցն ավարտած պատանուն զորակոչեցին բանակ, նրա ծառայությունն սկսվեց 261-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 978-րդ գնդում, որը տեղակայված էր խորհրդաթուրքական սահմանում: Սահմանն անցնելու և կորուսյալ երկիրն ազատագրելու հույսը համակել էր բոլոր զինվորներին և սպաներին: Սակայն հայի ճակատագիրը այս անգամ էլ անողոք գտնվեց...

1945-ին, երբ Լենդրոշը արդեն ծառայում էր եռակի շքանշանակիր հայկական Թամանյան դիվիզիայի շարքերում, հրամանատարությունը նկատեց գրագետ և բանիմաց պատանուն և նրան տեղափոխեց դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթի խմբագրատուն՝ որպես ավագ գրաշար:

Լենդրոշ Ազիզբեկյանը զորացրվեց 1950 թվականին և աշխատանքի անցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի տպարանում՝ որպես ավագ գրաշար:

Այսօրվա տպագրական գործին լավ ծանոթ մարդը հազիվ թե պատկերացնի, թե ինչ ծանր, գրագիտություն, համբերատարություն և մեծ նվիրում պահանջող մասնագիտություն է գրաշար լինելը: Արճճե տառերով լեցուն հարյուրավոր արկղերի միջից գրաշարը մեկ-մեկ ընտրում էր տառերը, շարում իրար կողքի, դարձնում բառ, հետո նախադասություն, պարբերություն և վերջապես ամբողջական տեքստ:

1958-ին Ազիզբեկյանը նշանակվեց տպարանի տնօրենի տեղակալ:

Աշխատանքին զուգընթաց 1964 թվականին նա ընդունվեց և 1970-ին ավարտեց Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետը (հեռակա) և նույն թվականին էլ նշանակվեց տպարանի տնօրեն: Կոլեկտիվը սիրով ընդունեց նոր տնօրենին, որովհետև իրենցն էր, յուրային էր, արդարամիտ էր ու անսահման բարի: Նրա տնօրինության տարիներին ԳԱԱ տպարանի վարկը և համարումը շատ բարձր էր հանրապետությունում: Լենդրոշ Ազիզբեկյանի ղեկավարության տարիներին իրականացվել են բազում բարձրարժեք և բարձրորակ ակադեմիական հրատարակություններ՝ «Հայ ժողովրդի պատմություն», «Հայ գրականության պատմություն», հայ դասականներից՝ Հովհաննես Թումանյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Դանիել Վարուժանի, Ակսել Բակունցի և այլ դասականների ստեղծագործությունների լիակատար ժողովածուները՝ բազմահազար տպաքանակներով:

Ամեն անգամ, երբ նոր հրատարակված գրքի ազդօրինակը հայտնվում էր տնօրենի գրասեղանին, պետք էր տեսնել, թե նրա մատները ինչպես են շոյում-փաղաքշում գիրքը, ինչպես է նա ըմբոշխնում նոր տպագրության անկրկնելի բույրը: Այդ զգացումը ունենում են միայն ու միայն ճշմարիտ պոլիգրաֆիստները: Իսկ Լենդրոշ Ազիզբեկյանը պոլիգրաֆիստ էր՝ կոչումով և նվիրումով: Եվ այդպիսին էլ մնաց մինչև իր կյանքի վերջը՝ իր տասնամյակների փորձն ու մանավանդ սերը մասնագիտության նկատմամբ, փոխանցելով երիտասարդներին:

Մենք ակադեմիայի բակում այլևս չենք տեսնի այդ ծանրախոհ, բոլորին սիրալիր ժպտացող ու բարի աչքերով բարևող, հրաշալի մարդ և քաղաքացի, աշխատանքի և պատերազմի վետերան Լենդրոշ Ազիզբեկյանին, որի ամբողջ կյանքը իսկական նվիրում էր:

Մենք անկեղծորեն սգում ենք Լենդրոշ Ազիզբեկյանի մահը և ցավակցում նրա հարազատներին: Նրա բարի հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

Կառուցենք շոգեգազային էլեկտրակայան Գյումրիում

Վառելիքաէներգետիկ ռեսուրսների խնայողության, շրջակա միջավայրի պահպանության տեսակետից կարևոր նշանակություն ունի նոր տեխնոլոգիաների օգտագործումը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տեխնիկապես հնարավոր է, տնտեսապես շահավետ Գյումրի քաղաքում կառուցել շոգեգազային էլեկտրակայան: Գյումրի քաղաքի կլիմայական պայմանները խիստ են, ձմեռը՝ երկար: Տարեկան ջեռուցման շրջանի տևողությունը կազմում է 188 օր: Առաջարկվող էլեկտրական կայանը միաժամանակ կարտադրի ինչպես էլեկտրական, այնպես էլ ջերմային էներգիա: Կայանի աշխատանքի սկզբունքը հետևյալն է. այրման խուց է տրվում վառելիք (բնական գազ): Այրման արգասիքները բարձր ջերմաստիճանով տրվում են գազային տուրբին, որտեղ արտադրվում է էլեկտրական էներգիա: Այնուհետև տուրբինում աշխատած գազերը, մոտ 400-ից 450° աստիճան ջերմաստիճանով, տրվում են ջերմափոխանակիչ ապարատ՝ ջերմամատակարարման ցանցային ջրի տաքացման համար: Հաշվարկները վկայում են, որ այս դեպքում կայանում վառելիքի օգտագործման արդյունավետությունը կազմում է մոտ 85 տոկոս:

Ներկայումս Գյումրի քաղաքում ջեռուցման և տաք ջրամատակարարման հարցերը լուծվում են «ով ինչպես կարող է» սկզբունքով:

Նոր էլեկտրակայանի նախագծման և կառուցման դեպքում 1 կՎտ-ժամ էլեկտրական էներգիայի արտադրության համար կծախսվի մոտ 200 գրամ վառելիք: Նշենք, որ Հրազդանի ՋԷԿ-ի համար այս ցուցանիշը կազմում է 372 գրամ: Կշահենք նաև բնապահպանական տեսակետից, քանի որ հսկայական քանակությամբ վառելիքի խնայողության դեպքում շրջակա միջավայր չի արտանետվի այրման հետևանքով առաջացած վտանգավոր նյութեր՝ ազոտի և ծծմբի օքսիդներ և այլն: 220 ՄՎտ հզորությամբ կայանի կապիտալ ներդրումների հետգնման ժամանակամիջոցը կկազմի մոտ 7 տարի: Բնակչությունը հնարավորություն կունենա բնակարանները ջեռուցել փոքր սակագների պայմաններում:

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու

ՀԱՄԱԼԱՀՈՍՀՈՍԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԳՐՈՀԸ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՎՐԱ

«Առավոտ» լրագիրը հրապարակեց ամերիկահայ Նշան Որբերյանի «Ինչո՞ւ պետք է վերադառնալ դասական ուղղագրութեան» ծրագրային «մանիֆեստը», որը նույն հարցի վերաբերյալ Սփյուռքի նախարարությունից «ստացուած մասնագիտական կարծիքների պատասխանն» է: Բարեբախտաբար, մենք տեղյակ չենք այդ «մասնագիտական կարծիքներին»:

Հեղինակը երկարաշունչ ու երկարաձիգ իր լարախաղացությունները սկսում է անորակելի կեղծիքներով , խորամանկությամբ ամեն ինչ խառնում իրար, ամեն ինչ ներկայացնում գլխիվայր: Տեսե՛ք, տեսե՛ք, պարոնի նպատակն է «հայաստանաբնակ մեր հայրենակիցներին ներկայացնել ուղղագրական հիմնախնդրի պատմականը և էությունը»: Կարծես թե հայաստանաբնակները Մարսից են իջել, և մի նոր Քրիստոս պետք է լինի նրանց լուսավորելու համար: Իր «պատմականը» պարոնը սկսում է 1922 թվականից: Իսկ ո՞ւր կորան Մ. Նալբանդյանի, Ստ.Նազարյանի, Ա.Այտընյանի, Ղ. Աղայանի, Ս. Սարգսյանի, Ստ.Մալխասյանի և բազում, բազում այլ լեզվագետների տասնամյակների վաստակը գրական աշխարհաբարի ուղղագրության կանոնակարգման, հստակեցման բնագավառում, որի ընդհանրացումն ու մեկտեղումն էր միայն 1913 թ. Աբեղյանի ներկայացրած զեկուցագիրը, և որտեղ Աբեղյանը գիտնականի բարեխղճությամբ արձանագրել է. «Ես այս ուղղագրական խնդիրն իսկապես շարունակություն ու մնացորդ եմ համարում գրաբարի և աշխարհաբարի մեծ վեճի, որ դեռ վերջնական բավարար լուծում չի ստացել մտքերի մեջ ընդհանրապես»: Այս տեսակետից նայելով խնդրին՝ կտեսնենք, որ դա այնպիսի պահանջ է, ինչ որ մի ժամանակ աշխարհաբար գրական լեզվի խնդիրը և նույնպես պիտի այս կամ այն կերպ լուծում ստանա, ինչպես աշխարհաբարի խնդիրը» (Աբեղյան, հ. Ը, էջ 334):

Ապա ներկայացնելով իր մտորումները՝ Աբեղյանը շարունակում է.«Մեր բաղաձայնների ուղղագրությանը չի կարելի և չպետք է դիպչել: Այդպիսի փոփոխությունները պիտի լինեն միայն ձայնավոր տառերի ուղղագրության մեջ, այն էլ այն տառերի, որոնց գրությունը համապատասխան չէ գոնե երկու գրական լեզուների ընդհանուր դպրոցական արտասանությանը» (նշ.տ., էջ 341):

Ուղղագրության հարցում այս լուրջ ու գիտական մոտեցումը անտեսելով՝ Աբեղյանին հայհոյելու մոլուցքով հարբած պարոնն ու պարոնները Աբեղյանի հազար ու մի մեղքերից առաջինը համարում են այն, թե «Աբեղյանի ռեֆորմի նպատակը կամ ելակետը հայերեն չիմացող անգրագետ սերունդն է»:

Այո՛, յոթերորդ երկնքում ձեզ երևակայող «յայոց անմահ ու հավետ» համալներ ու հոսհոսներ, սկսած Խաչատուր Աբովյանից, որը առաջինը աղավաղված նուերը դարձրեց նվեր, հայ ժողովրդի բոլոր նվիրյալներն ամեն ինչ արել են, որպեսզի անգրագիտության դատապարտված հայ ժողովրդի համար ստեղծեին նրան մատչելի ու հոգեհարազատ, հայոց լեզվի բնական օրենքներով ամրագրված գրական լեզու և լեզուն հասցրել են ժամանակակից բյուրեղացմանը: Մենք դեռ կանդրադառնանք գրահամակարգի շահարկումներին, բայց մինչ այդ արձանագրենք, որ մեր լեզվին նախանձախնդիր բոլոր նվիրյալների համար սրբազան պատգամի արժեք է ունեցել իրենց մեծ ուսուցչի խոսքը լեզուն ժողովրդի լայն զանգվածներին հասցնելու հարցում: Անդրադառնալով ժողովրդին անհասկանալի գրաբարին՝ Աբովյանը գրել է. «Տասը կըլի, որ հասկանա, բայց հարիր հազարի համար թեկուզ իմ գրածը, թեկուզ մի քամու ջաղաց»: Այո՛, «հարիր հազարների» համար են ստեղծել ժողովրդին հասկանալի ու հարազատ լեզու:

Իրականության նենգափոխում է շարունակվող «Թաբուն»: Փաստորեն մեր հարազատ հոսհոսներն են իրենց կաթնեղբայր համալների միջոցով փակել գիտական խոսք ասելու, իրեղեն ապացույցներով ճշմարտությունը ներկայացնելու բոլոր ճանապարհները, տիրացել են մամուլին և անարգել ներկայացումներ են կազմակերպում հեռուստատեսությամբ՝ առանց դույզն-ինչ պատկերացում ունենալու մեր լեզվի օրենքների ու օրինաչափությունների վերաբերյալ:

Նրանց բարձրացրած հերթական աղմուկի առնչությամբ, առանց մտնելու բանավեճի մեջ, մի հոդվածով ներկայացրել ենք գրաբարյան ուղղագրության ստեղծման շարժառիթն ու նրա դրսևորումը մատենագրության մեջ՝ օգտվելով մեր վաստակաշատ լեզվաբանների կուտակած



հում նյութից: 2006 թ. համոզել ենք «Գրական թերթի» խմբագրին, որ հրապարակի այն: Բայց սկզբի մի հատվածը տպագրելուց հետո (հ. 23 06 հոկտեմբերի) հրաժարվեց շարունակությունը տպագրելուց: Ո՞վ բռնեց նրա ձեռքը և ինչպե՞ս...

Պարոն Նշան Որբերյանի ծավալուն աշխատանքը սիրահոժար տպագրեց «Առավոտը», բայց հրաժարվեց ծավալով եռակի փոքր մեր աշխատանքը տպագրելուց: Ինչո՞ւ, որտե՞ղ է թաղված շան գլուխը: Չէ՞որ չասենք իրավական, բարոյական տարրական պահանջ է, որ գոնե համազգային հարթություն բարձրացված հարցերում հանդուրժվի տեսակետների տարբերությունը: Վերջապես, զառանցանք է պնդումն այն մասին, թե հայրենաբնակները վախենում են արևմտահայերենը պետական լեզու դարձնելու վտանգից: Եվ այսքանին էլ գումարում են սպառնալիքն այն մասին, որ եթե իրենց պահանջած մի երկու տառի գրությունը չփոխեն, ազգը երկփեղկվելու է, միջազգային լեզվագիտությունն էլ կանգնելու է կրախի առաջ ավելի ուժեղ, քան ժամանակակից ֆինանսական ճգնաժամը:

Այսքանը դեռ առաջին էջի առաջին կեսում: Բայց քանի որ բոլոր լարախաղացությունները չեն, որ արժանի են պատասխանի, թռուցիկ կանդրադառնանք 1922 թ. իրողությանը և «Ուղղագրական վերլուծումներ» բաժնին:

Դեռևս գրապայքարի թեժ մթնոլորտում հայտնի դարձավ, որ տարբեր բարբառների հիմքի վրա ստեղծվում է գրական երկու լեզու: Դա դժբախտ անխուսափելիություն էր թերևս այն պատճառով , որ Հայաստան աշխարհը կիսված էր երկու իրարամերժ պետությունների միջև, որոնցից յուրաքանչյուրը որդեգրել էր հայ ժողովրդին ազգային նկարագրից զրկելու, նրան ձուլելու քաղաքականություն: Դրան գումարվում էր նաև այն հանգամանքը, որ գրական երկու լեզուներից մեկը ձևավորվում էր հայրենի հողի վրա, մյուսը՝ հեռավոր գաղթօջախում: Երկու կողմերի մտավորականները զգում էին այդ անպատեհությունը ազգային տեսակետից, բայց ուրիշ հնար չկար: Ստեղծվող երկու գրական լեզուների հետագա մերձեցումը՝ մի միասնական գրական լեզու ստեղծելու տեսլականով, նրանք կապում էին «ժամանակի բերմունքի» հետ և հետևողականորեն գործում էին այդ ուղղությամբ ևս: Ահա ինչ է գրում այդ առթիվ Ղ. Աղայանը. «Մեր գրական լեզվի երկոքին ճյուղերը երկու հակառակ ծայրերից չեն հեռանում միմյանցից, այլ գնում են իրարու հանդեպ, և ուշ թե վաղ պիտի հանդիպեն միմյանց և գրկեն զիրար» (Ղ.Աղայան, հ. 3, էջ 296):

50-ամյա մի ժամանակահատվածում մեր գրական լեզվի երկու ճյուղերում էլ կատարվեցին բազմաթիվ բարեփոխումներ բառապաշարում, քերականության, արևելահայ հատվածում նաև ուղղագրության բնագավառներում և այնքան մոտեցան «իրարու հանդեպ», որ օրակարգի հարց դարձավ մի միասնական լեզվի ու միասնական ուղղագրության հարցը: Հերթականորեն վերջին քայլն այդ ուղղությամբ 1911 թ. «Ազատամարտի հավելվածում» բացված քննարկումներն էին, ուր պահանջ էր ներկայացվում կա՛մ ունենալ մեկ միասնական գրական լեզու, կա՛մ պետք է բուն Արևմտահայաստանի համար ստեղծել երրորդ գրական լեզու՝ Կարին կենտրոնով, որովհետև Պոլսահայ լեզուն նրանց համար մատչելի չէ:

Մոտենում էր հայոց տպագրության 400-ամյակը, որը պետք է դառնար համազգային տոն: Եվ քանի որ արդեն օրակարգում էր համազգային միասնական լեզվի ու նրա ուղղագրության խնդիրը, կաթողիկոսի հանձնարարությամբ ստեղծվում է հանձնաժողով, որը պետք է լուծում տար առաջադիր հարցին: Հանձնաժողովի հանձնարարությամբ Մ.Աբեղյանը հանդես եկավ զեկուցումով, ներկայացրեց միասնական ուղղագրության մասին իր մոտեցումները՝ ելակետ ունենալով լեզվի բնական օրենքները: Վրա հասավ համազգային աղետը, և միասնական ուղղագրության խնդիրը մնաց օդից կախված:

Տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղաշրջումը: Կ. Սիմոնյանի բացահայտմամբ Լենինի արձակած երրորդ դեկրետը լեզվի մասին էր, որով պահանջում էր անցնել լատինատառ գրության: Դա առաջին հերթին ուղղված էր ռուս ժողովրդի, ապա նաև մյուս ժողովուրդների դեմ, որ կորցնեն իրենց պատմական հիշողությունը, ազգային մշակույթը: Կ.Սիմոնյանը այդ ուղղությամբ ինչքան բացահայտումներ կատարել է, դեռ քիչ է: Շրջանցել է Ստալինի համանման պարտադրանքը 1935 թ., որովհետև այն նյութ չի տալիս Աբեղյանին հայհոյելու համար: Շրջանցել է նույն հարցով բրեժնևյան լճացման տարիներին կազմակերպված լեզվաբանների հավաքները, վերջապես հրապարակ նետված մի միասնական խորհրդային ժողովրդի ստեղծված լինելու միֆը, որը 1975 թ. պետք է օրինականացվեր սահմանադրությամբ:

Հայոց մտավոր աշխարհի համար ո՛չ նորություն, ո՛չ էլ անակնկալ էր լենինյան պարտադրանքը: Նման պարտադրանքները մեր ուղեկիցն են եղել հազարամյակներ շարունակ: Դեռևս ազգային գիր չունենալու պայմաններում Սասանյաններն արգելեցին հունարեն գրի գործածությունը՝ պարտադրելով իրենցը, որը ևս ինչ-որ չափով ազդակ դարձավ Մաշտոցի մեծագործության համար: Պակա՞ս հետևողական էր բյուզանդական կամ թուրքական պարտադրանքը, որի արդյունքում անխուսափելիորեն ունենում էինք մշակութային ու լեզվական կորուստներ: 400-ից ավելի է այն հայ աշուղների թիվը, որ ստեղծագործել են թուրքերենով, իսկ վիպական ստեղծագործություններն էլ պետք է կառուցեին այնպես, որ «թուրքացնեին այդ վեպերի անցքերը, անունները, հերոսների կրոնը, այլապես դուր չեն գալ օտարներին» (Ղ. Աղայան, հ. 3, էջ 369): Արդյունքում «Քյոռօղլի» թուրքալեզու ցեղերի համար՝ Պոլսից մինչև Միջին Ասիա: Գործողությունները ծավալվում են բուն Հայաստանում, ենթաշերտերում առկա են հայկական մշակութաբանության խոր նստվածքներ, բայց անճանաչելիորեն փոխված են հերոսների անուններն ու իրադարձությունները: Իսկ քանի՜-քանի՜ անգամ է ցարիզմը փակել հայկական դպրոցները, բռնագրավել գույքը՝ հետևողականորեն իրականացնելով ձուլման քաղաքականություն: Հիշենք Իսահակյանի «Ազգային երգը», որտեղ պատկերվում է, թե ինչպես է հայ ուսուցիչը իշխանություններից ծածուկ այգիներում մայրենի լեզու սովորեցնում իր սաներին: Ահա դարեր ի վեր այսպիսի պայմաններում էր, որ «...հայն ազատեց իր ընտանեկան լեզուն, ընտանեկան սովորությունները ու երգերը, վիճակի երգերը, մանկական հեքիաթները, բայց ոչ ԲԱՆԱՎՈՐ ԵՐԳԱՐԱՆԸ, որ իսպառ ՕՏԱՐԱՑԱՎ» (ընդգծումը Ղ. Աղայանինն է, նշ.տ., էջ 369):

Եվ ահա Եղեռն ապրած, հայրենիքի մեծ մասը կորցրած հայության գլխավերևը կախվում է հերթական կործանարար սպառնալիքը՝ լատինատառ գրությանն անցնելու լենինյան պարտադրանքը, որի ընդունումը կլիներ կատարյալ կործանում: Ի՞նչ անել, ինչպե՞ս փրկվել հերթական պարտադրանքից, ինչպե՞ս փրկել ազգային ինքնությունը: Եվ ժամանակի պետական գործիչները դիմեցին մի եզակի հնարամտության, մի եզակի քաղաքական ճկունության: Նրանք լավ գիտեին Լենինի դիրքորոշումը կրոնի ու եկեղեցու նկատմամբ, միաժամանակ չէին մոռացել, որ 1911 և 1913 թթ. ընդհանուր քննարկման առարկա էր եղել լեզվի միասնական ուղղագրության հարցը: Այս երկու ծայրերը մեկտեղելով՝ մեջտեղ բերեցին Մ. Աբեղյանի՝ 1913 թ. զեկուցագիրը, խմբագրեցին այն՝ ծայրահեղության հասցնելով հնչական ուղղագրությունը, նույնիսկ կատարելով լեզվական մեղանչում՝ այբուբենից հանելով որոշ տառեր: Դա անհրաժեշտ էին համարում Լենինին ցույց տալու համար, որ կատարում են լեզվական արմատական փոփոխություն, լեզուն ծառայեցնում են նրա սիրած «չփլախների» շահերին՝ հրաժարվելով «կրոնական հաշիշ» տարածող եկեղեցական գրականությունից: Այդ քայլին դիմելու համար նրանք ունեին ռուսների փորձը: Դեռևս 1917 թ. դեկտեմբերի 23-ին Ռուսաստանի լուսժողկոմը հրապարակում է ուղղագրական ռեֆորմի դեկրետը, որն իրականացվում է 1918 թվին: Ուղղագրական բարեփոխման արդյունքում ռուսերենի այբուբենից հանվում է 4 տառ: Այդ փորձն աչքի առաջ ունենալով՝ մերոնք էլ այբուբենից հանեցին 4 տառ՝ օ, է, ւ և բառավերջում գրվող, բայց չարտասանվող յ տառը: Տեղնուտեղը դեկրետավորեցին լեզվական ռեֆորմը՝ իմանալով, որ ընդհանուր քննարկման առարկա դարձնելու դեպքում այն վերածվելու է մկների ժողովի և խափանի իրենց նախաձեռնությունը:

(Շարունակելի)

Արտաշես ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, երաժշտագետ-արևելագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի և Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդի անդամ Լիլիթ Երնջակյանի «Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական փոխառնչությունների համատեքստում» հիմնարար ուսումնասիրությունը (խմբագիր՝ արվեստագիտության թեկնածու, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Արաքսի Սարյան), որը հեղինակը նվիրել է հոր՝ արևելագետ Վարդգես Երնջակյանի անմոռաց հիշատակին:

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Լ.Երնջակյանը, ով 1973-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, ապա 1980-ին՝ ՀԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի ասպիրանտուրան և աշխատանքի անցել Արվեստի ինստիտուտում, 1982-ին Տաշքենդում պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա «Մուղամաթի արվեստը հայ-իրանական երաժշտական կապերի տեսանկյունից» (գիտ. ղեկ.՝ Տ.Վիզգո, Ռ.Աթայան), իսկ 2004-ին Երևանում՝ դոկտորական ատենախոսություն «Աշուղական սիրավեպը հայ-արևելյան երաժշտական փոխառնչությունների համատեքստում» թեմաներով, երաժշտական արևելագիտության ոլորտի լավագույն գիտակներից է:

Տարիներ շարունակ լրջորեն ուսումնասիրելով Արևելքի դասական, ավանդական երաժշտության բազմաբնույթ խնդիրները, գիտականորեն հիմնավորելով հայ մոնոդիկ երաժշտության և Մերձավոր ու Միջին Արևելքի ավանդական, ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտարվեստի պատմատեսական ու գործնական-կատարողական հարցերը, ինչպես նաև Մերձավոր Արևելքի մշակութային փոխառնչություններին վերաբերող կարևոր դրույթներն ու իրողությունները, Լ.Երնջակյանը հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով լույս է ընծայել 4 գիրք և ավելի քան 60 գիտական հոդված, որոնց առանցքը հայ-իրանական և հայ-թուրքական երաժշտական առնչությունների լուսաբանությունն է: «Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական փոխառնչությունների համատեքստում» մենագրությունը հանրագումարի է բերում տվյալ բնագավառում հեղինակի երկարամյա մասնագիտական գործունեության արդյունքները:

Մենագրության մեջ էթնոերաժշտագիտական քննությամբ պարզաբանվել են հայ երաժշտապատմողական ավանդույթի ակունքները, զարգացման ուղին, տեղն ու դերը մերձավորարևելյան մշակութային փոխառնչությունների խառնարանում: Հեղինակն արծարծել է Արևելքի էպիկական երգաստեղծության պատմատեսական խնդիրները, աշուղական սիրավեպերի կրոնամշակութային հիմքերը, դրանց կառույցն ու ծիսաառասպելական մոտիվները: «Քյոռօղլի» և «Աշուղ Ղարիբ» հանրահայտ արևելյան սիրավեպերի ազգային մեկնակերպերի համեմատական քննությամբ Լ. Երնջակյանը հաստատել է հայ երաժշտապատմողական ավանդույթի վաղեմի արմատների գոյությունը Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածներում, ինչպես նաև հայ աշուղների, սազանդարների, հավասարապես և մուղամաթահարների անուրանալի ավանդը Արևելքի ժողովրդապրոֆեսիոնալ արվեստի զարգացման գործում:

«Հայ երաժիշտները պատմականորեն տևական և մշտական շփման մեջ են եղել հարևան մահմեդական շրջապատի հետ, բնականաբար, ձգտել են ընկալելի լինել իրենց արվեստով»,- գրում է Երնջակյանը: «Այս բնական միտումն է մղել հայ երաժիշտներին տեսականորեն հարաբերակցել հայոց ութձայնը պարսկա-արաբական ձայնակարգերի հետ, դիմել օտար տերմինաբանությանը, ծնունդ տվել հայատառ թուրքերեն երգերի և արևելյան ոճ ու երանգավորում ունեցող գեղգեղանքներով հարուստ մեղեդիների ստեղծմանը: Այսուհանդերձ, արևելամետ մշակութային համատեքստում հայ աշուղներն օտարանուն կաղապարների մեջ պահպանել են ազգային արվեստի երաժշտալեզվական հիմքերը՝ միջազգային ասպարեզ դուրս բերելով հայկական մոնոդիկ երաժշտության մեղեդային հարստությունները»:

Աշխատության հիմքում Հայաստանի պատմաազգագրական տարբեր շրջաններում և տարբեր ժամանակներում կազմակերպված գիտարշավների ընթացքում ձայնագրված աշուղական սիրավեպերի համեմատաբար ամբողջական շարքերն ու առանձին դրվագներն են: Ընդգրկված են նաև թուրքական, ադրբեջանական և իրանական երաժշտաէպիկական կոթողներ, հրատարակված ժողովածուներ, ինչպես նաև հեղինակի դաշտային աշխատանքների

արդյունքում հավաքված, համակարգված և վերծանված ձայնագրություններ:

Առանձնահատուկ հետաքրքրքրությամբ են ընթերցվում աշուղական մրցույթի արարողակարգին նվիրված բաժինները: Հեղինակի հետազոտությունները և փաստագրական նյութը վկայում են, որ աշուղական մրցույթի ավանդույթը ծաղկել ու զարգացել է պատմական Հայաստանի Կարս և Էրզրում նահանգներում, որոնք (անկախ տերիտորիալ պատկանելությունից) սահմանակից են եղել և՛ Իրանին, և՛ Ադրբեջանին: Կարսի, Էրզրումի, Իգդիրի, Անիի և այլ հայաբնակ շրջանների երաժշտական ավանդույթները տարրալուծվել են մերձավորարևելյան աշուղական երգարվեստում: Տարածաշրջանի աշուղական արվեստի զարգացման և ձևավորման գործում (հատկապես XIX-XX դդ.) մեծապես կարևորվում են այնպիսի անուններ, որոնք պարզորոշ հուշում են նրանց հայ լինելը՝ աշիկ Վիրանի Անիից, Զուլալի, Սազայի և այլք. նրանք, իրավամբ, համարվում են ներկայիս աշուղական երգարվեստի հիմնադիրները:

Աշխատության գիտական արժանիքներից է աշուղական արվեստի արդի վիճակի քննությունը, ինչի շնորհիվ ուրվագծվում է ժանրի ազդեցության ոլորտը ժամանակակից երաժշտարվեստում:

Այսօրվա գիտնականը չի կարող անտեսել համաշխարհային գիտության նվաճումները: Վերջին տասնամյակների գիտական հայեցակարգերի համադրումը Արևելքի կանոնական տեսությունների հետ հեղինակին հնարավորություն է ընձեռել նորովի բացահայտել աշուղների երաժշտաբանաստեղծական արվեստի հիմքերը: Նախանձախնդիր հետևողականությամբ է հեղինակը դիտարկում թե՛ հայկական, թե՛ մերձավորարևելյան ավանդույթները՝ կենտրոնանալով Արևելքի «հոգևոր տրուբադուրների»՝ սուֆի-պոետների գեղագիտական դրույթների համակարգի վրա, որոնք մեծապես ազդել են աշուղների ստեղծագործության վրա:

Հայագիտության, ինչպես նաև հայ երաժշտագիտության առաջնային կարևորություն ունեցող ոլորտներից մեկի հետազոտությունը Լ.Երնջակյանն իրականացրել է պատմամշակութային և ազգային-կրոնական շերտավորումների հատույթով, որը թույլ է տալիս ուսումնասիրել երևույթի տարբեր երեսակներն իրենց բազմազան գործառույթներով:

Հեղինակն օգտվել է միջդիսցիպլինալ գիտությունների լայն սպեկտրից, ավանդական երաժշտագիտական խնդիրները զուգորդել ծիսաառասպելական մտածողության դրսևորումների հետ: Ժողովրդապրոֆեսիոնալ արվեստի նկատմամբ այսօրինակ համապարփակ վերլուծություն առաջին անգամ է կիրառվում հայ երաժշտագիտության մեջ: Նմանապես, հայրենական գիտության նվաճումները հարստացվում և համալրվում են արտասահմանյան՝ արևելյան, արևմտաեվրոպական և ամերիկյան գիտնականների խոշոր նվաճումներով, որոնք նոր որակ են հաղորդում աշուղական արվեստի հետազոտությանը:

Երևույթների բազմապլան քննության շնորհիվ Լ.Երնջակյանի գիրքը, անշուշտ, նոր ուղիներ է բացում հետագա ուսումնասիրությունների համար՝ հայագիտության մեջ բարդ մշակութային համատեքստի լուսաբանման համար անհրաժեշտ նոր հասկացությունների ու եզրերի ներմուծումով:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն, արվեստագիտության դոկտոր

Ռույրերի «հիասքանչ» աշխարհում՝ Պատրիկ Զյուսքինդ, Թոմ Թիքվեր

1985 թ.-ին լույս տեսավ գերմանացի աշխարհահռչակ գրող Պատրիկ Զյուսքինդի "Օծանելիք՝պատմություն մի մարդասպանի մասին" վեպը, որը նրան վերջնականապես դարձրեց աշխարհում ժամանակակից գրականության ամենահայտնի և ամենահաջողակ գերմանացի գրողներից մեկը: Այս վեպը դարձավ ոչ միայն բեստսելլեր, այլև լոնգսելլեր՝ տաս տարի շարունակ մնալով "Շպիգել"-ի բեստսելլերների ցուցակում: Գիրքը թարգմանվել է 42 լեզուներով, այդ թվում նաև լատիներենով, վաճառվել 15 մլն օրինակով՝ ճանաչվելով գերմանական լեզվով գրված ամենահայտնի վեպը Կաֆկայի ժամանակներից ի վեր:

Գործողությունները վեպում տեղի են ունենում 18 –րդ դարի Ֆրանսիայում: Ներկայաց-վում է ժան Բատիստ Գրենոյի կյանքի պատմությունը. մարդ, ով օժտված է գերբնական հատկությունով՝ աներևակայելի հոտառությամբ՝ զուրկ լինելով մարմնի սեփական բույրից: Ողջ բարձր հասարակությունը խենթանում է նրա օծանելիքներից՝ չենթադրելով անգամ այն մասին,թե ինչ սարսափելի գնով կստեղծվի նրա վերջին կատարյալ օծանելիքը: Իսկ գինը քաղաքի ամենագեղեցիկ կանանց մարմնի բույրերի միախառնումն էր, որ իրագործվեց բազմաթիվ սպանությունների միջոցով: Գրենոյը սարսափելի է, նրա նկարագիրը կարող էր բավարարել մի քանի սարսափ ժանրի վեպերի հերոսներին բնութագրելու համար, և այնուամենայնիվ նա կարողանում է ողջ հասարակությանը արբեցնել իր ստեղծած բացառիկ բույրով և մոռացության տալ գործած բոլոր հանցանքները: Այստեղ թաքնված է քննադատություն մի երևույթի նկատմամբ , որ առկա է նաև մեր ժամանակներում, թե ինչպես մանիպուլիացիայի միջոցով կարելի է իրականությունը խեղաթյուրել և ներկայացնել այն առավել հարմար ռակուրսից: Զյուսքինդը դատապարտում է հասարակությունը, որը, չունենալով սեփական կարծիք, կամ վախենալով, ինչու ոչ՝ զլանալով սեփական կարծիքը հայտնել, հետևում է՝ առանց քննության ենթարկելու, արդեն գոյություն ունեցող կարծիքներին: Եվ հենց այստեղ էլ հասարակությունը վերածվում է ամբոխի, որ պետք չունի մտածելու, կշռադատելու:

2006 թ.-ին տեղի ունեցավ Զյուսքինդի համանուն վեպի էկրանավորման պրեմիերան: Վեպի էկրանավորման բարդ պարտականությունը իր վրա վերցրեց երիտասարդ ռեժիսոր Թոմ Թիքվերը: Ֆիլմը հասարակության դատին հանձնվեց ոչ թե, ինչպես կանխատեսելի էր, ամերիկյան Հոլիվուդից, այլ հանդարտ եվրոպական Գերմանիայից, որ վերջին տասնամյակում չէր փառաբանվել ոչ մի բլոկբաստերի շնորհիվ: Ֆիլմի ստեղծողները գործեցին Զյուսքինդի ստեղծագործության վայել.նրանք աչք փակեցին բոլոր կանոնների և կաղապարների վրա, որ թելադրում է ժամանակակից կինեմատոգրաֆիան. ֆիլմը չէր պատմում հերոս-տղայի մասին, չէր վախեցնում ֆանտաստ ժանրի "սարսափիկներ"-ով և խղճահարության արցունքներ չէր քամում, պատանիներին էկրաններին չէր գամում՝ ցուցադրելով բռնության և դաժանության ապշեցուցիչ միախառնում: Ստեղծողները նույնիսկ չմտածեցին գովազդի մասին, այն չհանձնեցին ոչ մի փառատոնի դատին, չնկարահանեցին ոչ մի հեռուստատեսային հոլովակ: Ֆիլմը չի հեռացել գրքի սցենարից՝ ինչն ավելի է արտահայտել երիտասարդ ռեժիսոր Թոմ Թիքվերի տաղանդը: Ֆիլմի յուրաքանչյուր դրվագ այնքան կատարյալ է իր տեսակի մեջ, որ այն կարելի է տեղադրել շրջանակի մեջ և կախել պատից: Ֆիլմը իրոք հանճարեղ է. Թիքվերը թույլ տվեց ամենաիրական կերպով ապրել և զգալ բոլոր հոտերը ֆիլմային լեզվի միջոցով:

Տաթևիկ ԱՄԻՐՅԱՆ
ԵՊՀ ասպիրանտ

«20-րդ դարի առաջին ցեղասպանությունը»

Սույն խորագրով հոդվածը իսպանական «Sapiens» ամսագրում առանձնանում է նրանով, որ այդ թեմային առաջին անգամ լայնորեն անդրադառնում է կատալոնյան մի լրատվամիջոց՝ մանրամասնորեն նկարագրելով դրա հանգամանքները և իրականացումը, ինչպես նաև հետևանքներն ու արձագանքները: Նշենք, որ «Sapiens» պատմահանրամատչելի ամսագիրը ներկայումս կատալոներեն ամենաշատ վաճառվող հանդեսն է, որը տարածվում է ամսական 100.000 ընթերցողների միջև:

Հոդվածը գրել է լրագրողուհի Սոնիա Կասասը՝ պատմաբան Ագուստի Կոլոմինեսի և Բարսելոնի հայ մշակութային ընկերության նախագահ Գոռ Աբգարյանի աջակցությամբ:

Հոդվածը կառուցված է իրական, փաստագրական և օբյեկտիվ տվյալների վրա: Թուրքական պետության կողմից հայ փոքրամասնության դեմ իրագործված ցեղասպանությունը Առաջին աշխարհամարտի ժամանակ շարունակում է առաջացնել հրապարակումներ և վեճեր: Այդ կապակցությամբ հեղինակը գրում է. «Հարյուր տարի անց Թուրքիան շարունակում է այն չընդունել և կիրառում է օրենք, համաձայն որի պատժվում են հիշատակող անձինք: Նաև այն չեն ընդունել պաշտոնապես Իսպանիան, Միացյալ Թագավորությունը, Միացյալ Նահանգները կամ Իսրայելը՝ այն դեպքում, երբ նույն Հիտլերը այն օրինակ էր բերել. «Ո՞վ է հիշում հայերին», - կասի Ֆյուրերը Վարշավայում 1939 թ., մինչ փաստարկում էր իր վերջնական որոշումը»:

Որպես նախաբան՝ հեղինակը նշում է, որ 1915-1917 թթ. Օսմանյան կայսրությունում ապրող հայերի երկու երրորդը կոչնչացվի թուրք իշխանությունների կողմից: Համարվելով հոլոքոստի նախադեպ, ինչպես անաչառորեն նկատում են հոդվածագիրները, աներևակայելիորեն այն մնաց որպես քիչ հայտնի մի դրվագ: Հարյուր տարի անց Թուրքիայի կողմից սնուցած լռությունը և մերժումը թույլ չտվեցին, որ վերքերը կարողանային դարմանալ: Մեկ միլիոնից ավելի զոհ: Հայկական աղբյուրները խոսում են մեկ ու կես միլիոն զոհերի մասին, մինչ թուրքական կառավարությունը 1919 թ. ճանաչել է 800. 000: Այսօր Թուրքիան չի ընդունում կոտորածները՝ ցանկանալով ամեն կերպ խոչընդոտել հարցի արդար ու օբյեկտիվ ներկայացումը և խեղաթյուրել պատմական իրականությունը: Գաղտնիք չէ, որ նույնիսկ գերմանացիները՝ Թուրքիայի դաշնակիցները, Առաջին աշխարհամարտում բազմիցս բացահայտել են դաժանությունները, որոնց ենթարկվել են հայերը: Հոդվածում մեջբերվում է Հալեպի գերմանական դպրոցի չորս ուսուցիչների նամակը, որտեղ հայտնում են իրենց վրդովմունքը Բեռլինի Արտաքին գործերի նախարարություն: Մասնավորապես, որ «3000-ից ավելի հայ գյուղացի կանանցից 40-ն էին ողջ մնացել: Ամենագեղեցիկները իրենց պահապանների վավաշոտության զոհն են, մնացածները սովի և ծարավի զոհ են. նույնիսկ ջուր լինելու դեպքում նրանց արգելվում է խմել: Եվրոպացիներին արգելված է օգնել նրանց: Ամեն օր Հալեպից դուրս է բերվում 100-ից ավելի դիակ»: Իրոք, Հալեպը դարձավ արտաքսումների կենտրոնը: Թուրքական կառավարությունը այնտեղ բացեց Արտաքսումների գլխավոր վարչություն՝ կառավարելու Թրակիայից, Կիլիկիայից և Փոքր Ասիայի արևմուտքից եկող խմբերի տեղաբաշխումը: Ավելի քան կես միլիոն մարդ տեղավորվեց քաղաքից դուրս՝ բաց երկնքի տակ մի քանի տասնյակ ճամբարներում, ուր ենթարկվեցին դանթեական կյանքի պայմաններին: 1916 թ. դեկտեմբերին թուրք իշխանությունները վարձեցին քոչվոր ցեղերին և չեթե մարդասպաններին, որպեսզի վերջ տային ճամբարների վերապրածներին:

Ըստ հայկական աղբյուրների՝ 2.100.000 հայերից հաշվարկված Օսմանյան կայսրությունում 1912 թ. մարդահամարի ժամանակ վերապրեցին միայն 600.000-ը: Միևնույն ժամանակ Պոլսում արդեն երկար ժամանակ գործում էր «լքված ունեցվածք» կոչվող մի հանձնաժողով, որն իրականացնում էր հայերի ունեցվածքի բռնագրավումը: Թուրք ղեկավարների անպատկառությունը հասել էր այն աստիճանի, որ նրանք պահանջում էին կյանքի ապահովագրական վկայականները և բանկային հաշիվները, որ որոշ հայեր ունեին Միացյալ Նահանգներում: Սակայն թալանը չի սահմանափակվում միայն մասնավոր սեփականության շրջանակով՝ եկեղեցիներ, վանքեր, գրադարաններ, ամրոցներ, դպրոցներ, անբնակ ավաններ... հայ ժողովրդի սեփականությունը պարբերաբար կանարգվի և կոչնչացվի: Կարճ ամիսների ընթացքում թուրք իշխանությունները ջնջեցին մշակութային ժառանգության վկայությունները՝ ստեղծված ավելի քան երեքհազարամյա պատմության ընթացքում:

Միայն Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին՝ զինադադարի ստորագրումից հետո՝ 1918 թ. հոկտեմբերի 18-ին, դաշնակիցները պահանջում են քրեական պատասխանատվության կանչել կոտորածների հեղինակներին: Ակնկալելով դաշնակիցների բարեհաճությունը և ապագա խաղաղության կոնֆերանսի սպասումով նոր Օսմանյան կառավարությունը 1919 թ. կազմում է ռազմական խորհուրդ երիտթուրքերի դատավարության համար, որ երկիրը բերին ռազմական պարտության և աքսորների ու «ամբողջ մի ժողովրդի ոչնչացման»:

Կոտորածների գլխավոր կազմակերպիչներն ու կատարողները՝ Թալեաթը և Ջեմալը, դատապարտվեցին մահապատժի, սակայն նրանք փախան արդարությունից, ինչը չփրկեց նրանց, քանի որ ստացան հասանելիք պատիժը: Սողոմոն Թեհլիրյանի գործը դարձավ այն հազվադեպ դատավարություններից մեկը, որտեղ պաշտոնապես ճանաչվեց ցեղասպանությունը՝ հիմնված գերմանական դատարաններում լսված տարբեր սպաների վկայությունների վրա, որոնք տեսել էին հայ բնակչության դեմ իրագործված դաժանություններն ու բռնությունները: Հենց ներշնչված այդ դատավարությամբ՝ լեհ Ռաֆայել Լեմկինը ստեղծեց ցեղասպանություն բառը: Միևնույն ժամանակ Թուրքիայում գեներալ Մուստաֆա Աթաթուրքը սկսում է արևմտացման գործընթացը, որը լիովին կփոխի Օսմանյան կայսրության պատկերը: Նոր այբուբենի ստեղծմանը և խալիֆաթի վերացմանը գումարվում են այլ որոշումներ, ինչպես ընդհանուր համաներումը, որը վերացնում է Օսմանյան դատական գործընթացները, որոշում, որ միջազգային հանրությունը վավերացնում է Լոզանի պայմանագրով, 1923 թ.:

Քեմալական հանրապետությանը հաջողվեց իրենից հանել պատասխանատվությունը և դեռ ավելին՝ բացի մերժելուց Թուրքիայի մեղքը ոչնչացման մեջ, սկսում է մերժել ընդհանրապես սույն փաստը, դիրքորոշում, որը հասել է ներկայիս Թուրքիային: Ներկայանալով աշխարհի առաջ որպես ժամանակակից և աշխարհիկ պետություն՝ Աթաթուրքը վերաստեղծում է պատմությունը վերևից ներքև: Կարծես թե այլևս հայ ժողովուրդը գոյություն չունի, բավական կլինի թուրք միացյալ ազգի առասպելը՝ հաստատված Անատոլիայում ժամանակի ակունքներից և ժառանգած խեթերից ու բյուզանդացիներից: Փաստորեն հայերի հայտնվելը, որոնք հետո մնում են Թուրքիայում, հաճախ վերագրվում է եկվորներին և այլ քաղաքակրթություններին: Կոտորածների վերապրածներին, վախենալով իրենց կյանքի համար, այլ ելք չի մնում, քան լքել հարազատ օջախները և գաղթել Ամերիկա, Եվրոպա և նորաստեղծ Խորհրդային Հայաստան: Հայ ժողովրդի դեմ գործած հանցագործությունները մոռացության կմատնվեն, իսկ 1948 թ. առանց բարդությունների Թուրքիան ստորագրում է Միացյալ ազգերի՝ ցեղասպանության մասին կոնվենցիայի պայմանագիրը: Ինչպես Խորհրդային Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի համար՝ ցրված աշխարհով մեկ, ոչնչացման իրականության պահանջարկը դառնում է առաջնային՝ սկսած 1965 թ. դիվանագիտական երկարատև պայքարի սյուներից մեկը:

Հակոբ ՍԻՄՈՆՅԱՆ

Սողացող ցեղասպանություն

Ինչպես հաղորդում է թուրքական Radikal թերթը, 2009 թվականի ընթացքում Թուրքիայում սպանվել է մոտ 20 հազար քուրդ, այդ թվում՝ 792 կին:

Այս հաղորդագրության համար հիմք է ծառայել Թուրքիայի ներքին գործոց նախարար Բեշիր Աթալայի հայտարարությունը Մեջլիսում:

Այս ակամա խոստովանության պատճառ է հանդիսացել քրդական «Խաղաղություն և դեմոկրատիա» կուսակցությունից պատգամավոր Այլա Աթաքայրի պաշտոնական հարցը:

Ներքին գործերի նախարարը «անկեղծանալով», ամբիոնից տեղեկացրել է, որ սպանվածներից երկու հազարը եղել են 20 տարեկանից փոքր, հինգ հազարը՝ 20-ից 30 տարեկան:

Ընդամենը մեկ տարվա ընթացքում 20 հազար քրդերի ոչնչացումը թույլ է տալիս եզրակացնել, որ այսօր էլ Թուրքիայի տարածքում իրականացվում է ցեղասպանություն, որը, ինչպես որակվում է, ունի «սողացող» բնույթ:

Վատիկանը քրիստոնյաներին մեղադրեց Եվրոպայի իսլամացման համար

Վատիկանի բարձրաստիճան ներկայացուցիչ հայր Պիեռո Գեդդոն եվրոպացի քրիստոնյաներին կոչ է արել ավելի շատ երեխաներ ծնել Եվրոպայի իսլամացում թույլ չտալու համար: Այդ մասին հաղորդում է Catholic cuiture կայքէջը:

Գեդդոն քրիստոնյաներին մեղադրել է «կրոնական վակուում» ստեղծելու մեջ: Նրա խոսքերով այդ դատարկությունը «լցվում է իսլամով»: Հայր Գեդդոն հայտարարել է, որ Իտալիայում բնիկների թիվն ամեն տարի կրճատվում է 12-13 հազարով, մինչդեռ ներգաղթյալների միջավայրում (նրանց կեսից ավելին մահմեդականներ են) ծնունդների թիվն անշեղորեն աճում է:

Ի դեպ, Իտալիան ամեն տարի ընդունում է մոտ 200 հազար օրինական ներգաղթյալների:

«Եթե մենք մեզ համարում ենք քրիստոնեական երկիր, ապա պետք է դավանենք քրիստոնեական արժեքներ: Դա մեզ կօգնի լուծելու դատարկ օրորոցների խնդիրը»,- հայտարարել է Պիեռո Գեդդոն:

Աչքերս լույս. հիմա էլ Նախիջևանը կպան թուրքերին

Մեկնաբանելով Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևի այցը Հայաստան՝ Ադրբեջանի կառավարող «Յենի Ադրբեջան» («Նոր Ադրբեջան») կուսակցության ղեկավարներից մեկը՝ Ալի Ահմեդովը, կարծիք է հայտնել, որ պետք է սպասել Ռուսաստանի առաջնորդի այցելությանը Ապշերոն և ապա համապատասխան քայլեր ձեռնարկել:

Ալի Ահմեդովի գնահատմամբ հայ-ռուսական համաձայնագրի նորացումը տարածաշրջանում փոխել է ուժերի հավասարակշռությունը, և ադրբեջանական կողմը հույս ունի... Մեդվեդևի այցով Ադրբեջան՝ հավասարակշռությունը կվերականգնվի:

Նա բացատրել է, որ ինքը և իր կուսակիցները անհանգստացած են ստեղծված նոր իրավիճակով և խորհրդակցություններ են անցկացնում «Միացյալ Ռուսաստան» կուսակցության հետ:

Իսկ ինչ վերաբերում է Նախիջևանում Թուրքիայի ռազմական հենակայան տեղադրելու մասին լուրերին, Ալի Ահմեդովը ասել է, որ Նախիջևանի անվտանգությունը պետք է տրվի Թուրքիայի իրավասությանը, և Անկարան արդեն աշխատում է այդ ուղղությամբ:



Ագուլիսը XIX դ. վերջին:

Մոլորակի ջերմացման պնդումները սնանկ են ճանաչվել

Երկրի կլիմայի տաքացմանը վերաբերող պնդումները, ինչպես պարզվում է, հիմնազուրկ են: Աշխարհի առաջատար գիտական հիմնարկների միավորման՝ InterAcademy Council (IAC)-ի անցկացրած հետազոտության արդյունքները վկայում են, որ ՄԱԿ-ին ենթակա Կլիմայի փոփոխության միջկառավարական փորձագիտական խմբի (IPCC)՝ ընդհանուր տաքացման վերաբերյալ արած պնդումները «այնքան էլ հիմնավոր չեն»: Այդ մասին հաղորդում է Daily Express թերթը: IPCC-ի հեղինակությանը «լուրջ վնաս» է պատճառված, հարցականի տակ է IPCC ղեկավար, դոկտոր Ռաջենդրա Պաչաուրիի կարիերայի հարցը:

Մրցանակ՝ Շառլ Ազնավուրին



Շառլ Ազնավուրին շնորհվել է ռուսական մշակույթի փառատոնի բարձրագույն մրցանակը: Ֆրանսիական շանսոնի լեգենդար վարպետը արժանացել է մրցանակի «Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև մշակութային կապերի ամրապնդման համար»: Հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել Կաննի՝ փառատոների և համագումարների պալատում՝ «Ռուսական գիշերվա» ընթացքում:

Շառլ Ազնավուրի անունը հավերժացել է Պամիրի լեռնագագաթին

Ուկրաինացի ալպինիստ Սերգեյ Ղայֆեջյանը դարձավ աշխարհի առաջին լեռնագնացը, որը հաղթահարեց Պամիրի լեռնաշղթայի հինգհազարանոց գագաթներից մեկը:

Ի դեպ, հիմա արդեն այդ նվաճված անանուն լեռնագագաթը անուն ունի: Օգտվելով լեռնագագաթը առաջինը նվաճողի իր իրավունքից՝ Ղայֆեջյանը 5250 մետր բարձրություն ունեցող գագաթը կոչեց Շառլ Ազնավուրի անունով:

Ղայֆեջյանը լեռնագագաթին ամրացրել է նաև հուշանշան՝ մեծանուն շանսոնիեի նկարով:

Պամիրում կա ևս մի հինգհազարական լեռնագագաթ, որը Ղայֆեջյանի շնորհիվ ստացել է հայկական անվանում. դա «Արմենիա» լեռնագագաթն է՝ 5495 մետր բարձրությամբ: Այդ լեռնագագաթը Սերգեյ Ղայֆեջյանը նվաճել է վեց տարի առաջ:

Ուսանողական խորհուրդը ողջունում է առաջին կուրսեցիներին

Սիրելի՛ ուսանողներ: Միրով ողջունում ենք Ձեր մուտքը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն: Ուրախ ենք, որ ՀՀ-ում արժևորվում և գնահատվում է գիտելիքների ձգտումը՝ հատկապես երիտասարդների շրջանում, որոնք իրենց ողջ ուժերը պատրաստ զինվորի նման, մղում են էլ ավելի գրագետ, շնորհալի, բարձրակարգ մասնագետ դառնալու ճանապարհին:

Համոզված ենք, որ կրթվելու, գիտելիք ստանալու այդ մեծ ծարավը, որն այսօր առկա է գիտակրթական միջազգային կենտրոն ընդունված ցանկացած ուսանողի սրտում, կտա սպասված արդյունքը: Մեր նշանաբանն է՝ «Գիտելիքի կողքին նաև ակտիվ ուսանողական կյանք», որի իրականացման համար մենք չենք խնայում ոչ մի ջանք, որովհետև համոզված ենք, որ գիտելիք ստանալու անհագ ցանկության կողքին միշտ իրենց տեղն ունեն ուսանողական կյանքի անգին պահերը, մեր գործունեության կարևոր բաղադրիչը: Ուրեմն, լցվենք գիտությամբ և դառնալով հմուտ և ուսյալ մասնագետներ՝ պիտանի լինենք մեր հայրենիքին և ժողովրդին:

Մեկ անգամ ևս շնորհավորում ենք Ձեր մուտքը մագիստրատուրա և սրտանց ասում՝ ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայի ուսանողական խորհուրդ



Կբացահայտվեն կեղծ ամուսնությունները

Բրիտանական ներգաղթային գործակալությունը մտադիր է օգնել անգլիացի հոգևորականներին՝ ի հայտ բերելու կեղծ ամուսնությունները: Այդ առաջարկը եղել է այն բանից հետո, երբ անգլիացի մի հոգևորական մեղավոր է ճանաչվել իր եկեղեցում հարյուրավոր զույգերի պսակելու համար, որոնց ամուսնությունները, պարզվել է, կեղծ են եղել: Եկեղեցում արված նման պսակը թույլ է տալիս ապօրինի գաղթականներին օրինական հիմունքներով ավելի երկար մնալ Մեծ Բրիտանիայում: Բրիտանական սահմանապահ ծառայությունն անգլիական եկեղեցու յուրաքանչյուր թեմի առաջարկում է կապի մեջ լինել տեղի ներգաղթային բյուրոյի հետ՝ խորհրդատվություն ստանալու և կեղծ ամուսնությունների բացահայտման ուղղությամբ աջակցության համար: Այսպիսով, հոգևորականները պարտավորված կլինեն բացահայտել կեղծ ամուսնությունները և դրանց մասին հայտնել աշխարհիկ իշխանություններին, որոնք էլ միջոցներ կձեռնարկեն դրանք չեղյալ հայտարարելու և օրենսդրությունը խախտողներին Մեծ Բրիտանիայի սահմաններում գտնվելու իրավունքից զրկելու:

Պատվաստանյութերի համադրությունից՝ դողերոցք

Նոր հետազոտությունը ցույց է տվել, որ կարմրախտի, խոզուկի, կարմրուկի և ջրծաղիկի դեմ MMRV պատվաստանյութը երեխաների մոտ ավելի հաճախ է առաջացնում դողերոցքային ցնցումներ, քան առանձին պատվաստանյութերը: Այդ ցնցումներն առաջանում են մեծ և փոքր տարիքի երեխաների բարձր ջերմության դեպքում: Դրանք անվնաս են և հանդիպում են միայն երեխաների մոտ: «Pediatrics» ամսագրում հրապարակված հետազոտությունը, որին ընդգրկվել են 459.000 ամերիկացի երեխաներ, ցույց է տվել, որ նման ցնցումների վտանգը կրկնապատկվում է համադրված պատվաստանյութի դեպքում:

Մորմոնները իրենց մասին

Սոլթ Լեյք Սիթի. Հիսուս Քրիստոսի Վերջին օրերի սրբերի եկեղեցին թողարկել է գովազդ՝ ցրելու համընդհանուր ճանաչված կարծրատիպերը մորմոնների մասին: Գովազդային նոր արշավում մորմոնները պատմում են իրենց, իրենց արժեքների և հետաքրքրությունների մասին, փորձում ցրել այն առասպելը, թե իրենք հնաոճ և միմյանց նման են: Հեռուստատեսությամբ ամերիկյան 9 քաղաքներում ցուցադրվող հոլովակներից պարզվում է, որ Վերջին օրերի սրբերի եկեղեցու հետևորդների թվում են քանդակագործներ, սերֆինգիստներ, սքեյթբորդիստներ և մոտոցիկլիստներ: Եկեղեցու ներկայացուցչի խոսքերով արշավը պետք է փոխի վերաբերմունքը մորմոնների հանդեպ: Տվյալ ակցիան ընթանում է համացանցում. արդեն 2000 մորմոն ստեղծել է իր կայքէջը, որտեղ պատմում է իր և իր կրոնական համոզմունքների մասին: Wltx պորտալի տվյալներով մորմոնների թիվը կազմում է 13,5 միլիոն, որոնցից շուրջ 6 միլիոնն ապրում է ԱՄՆ-ի տարածքում:

Հայտնաբերվել է ձիու հնագույն զոհաբերություն

Հայաստանում պեղումներով գտնվել է Առաջավոր Արևելքում առաջին անգամ հայտնաբերված ձիու հնագույն զոհաբերությունը: Պեղումները մեկնարկել են 2006 թ. և իրականացվում են Փարպի գյուղի հողատարածքում՝ Նավեր կոչվող վայրում, որտեղ կա հսկայական դամբարանադաշտ, որը համարվում է միջին բրոնզե դարի ամենահին շինությունը: ՀՀ մշակույթի նախարարությանն առընթեր պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Հակոբ Սիմոնյանի ներկայացմամբ բացահայտումը կարևոր իրողություն է ոչ միայն Հայաստանի, այլև տարածաշրջանի համար: Դամբարանի գտածոները բնորոշ են վաղ և միջին բրոնզե դարաշրջանին: «Եզակի դամբարանաբլուր է: Ձիու զոհաբերությունը փաստում է, որ Հայաստանը եղել է ձիաբուծության կենտրոններից մեկը»,- ասել է նա՝ նշելով, որ նման հնության գյուտ ողջ Առաջավոր Ասիայում դեռևս չի հայտնաբերվել: Դամբարանում հայտնաբերվել է նաև խոշոր գիշատիչ կենդանու մագիլ, որը հայտնաբերվել է հանգուցյալի գլխի տակ: Կենտրոնի տնօրենի ներկայացմամբ դամբարանը թվագրվում է Ք.ա.26-25-րդ դդ.: Նավերում հայտնաբերվել է Ուրարտական շրջանի թաղում. Վանի թագավորության շրջանում բրոնզեդարյան դամբարանների ներսում կատարվել են իջեցիկ թաղումներ:

Հայտնաբերվել են նաև նետասլաքներ, ոսկյա փոքրիկ սարք, շքեղ գունազարդ անոթներ, դաշույն, վաղ բրոնզե դարին բնորոշ մագաղաթատիպ ատամնավոր գործիք ձիու առջևի մասում:

«Նավերի պեղման միջոցով ունենք պատկերացում միջին բրոնզե դարի դամբարանների կառուցվածքի մասին: Դամբարաններն արտացոլում են նաև հանգուցյալի հասարակական դիրքը: Սիմոնյանի փոխանցմամբ մեծ դամբարանները պատկանել են մեծահարուստներին, իսկ աղքատների դամբարաններն ավելի փոքր էին և զուրկ զրահից»:

Մոնպելիեն կարող է արձանների քաղաքի վերածվել

Ֆրանսիական Մոնպելիե քաղաքում Վլադիմիր Լենինի հուշարձանը կտեղադրվի: Այդ մասին օրերս փոխանցել է «Ֆրանսպրեսը»: Մոնպելիեում միաժամանակ նախատեսվում է կանգնեցնել նաև Ունիստոն Չերչիլի, Շառլ դը Գոլի, Ֆրանկլին Ռուզվելտի և ժան ժորեսի արձանները, որոնցից յուրաքանչյուրի բարձրությունը ավելի քան 3 մետր է, իսկ քաշը 850 կգ-ից մինչև մեկ տոննայի կիսասնի: Արձանների բացման պաշտոնական արարողությունը տեղի է ունենալու սեպտեմբերին: Դրանցից յուրաքանչյուրի համար քաղաքային բյուջեից վճարվել է 200-հազարական եվրո:

Lenta.ru-ի փոխանցմամբ այդ ինքնատիպ ակցիայի գաղափարը Մոնպելիեի շրջաններից մեկի՝ Լանգեդոկ-Ռուսիլիոնի ղեկավար ժորժ Ֆրեսշինն է: Նա այդ առաջարկն առաջին անգամ արել է դեռ 2008 թ.: Շրջանի ղեկավարը հայտարարել է, որ Լենինին, Չերչիլին, դը Գոլին, Ռուզվելտին ու ժորեսին համարում է «20-րդ դարի մեծագույն մարդիկ»: Նա ծրագրում է 2011-ին առաջարկել Մոնպելիեում կանգնեցնել նաև Մահաթմա Գանդիի, Գոլդ Մեյերի, Համալ Նասերի, Նելսոն Մանդելայի և Մաո Ցզեդունի արձանները: Ի դեպ, շրջանի ղեկավարը սոցիալիստ է և սոցիալիստական կուսակցությունից հեռացվել է ռասիստական հայտարարություններ անելու համար: Ֆրանսիայի «կանաչներն» արդեն սպառնացել են քանդել հուշարձանները, իսկ աջերը վրդովված են, որ շրջանի ղեկավարը դը Գոլին և Լենինին նույն հարթության վրա է դրել:

ՍՈՒՐՃՆ ԸՆԴԴԵՄ ՔԱՂՑԿԵՂԻ

Ըստ HealthDay News-ի՝ նոր հետազոտությունը ցույց է տվել, որ սուրճը պաշտպանում է գլխի և պարանոցի քաղցկեղից: Գիտնականները վերլուծել են գլխի և պարանոցի քաղցկեղի համաճարակաբանության միավորման 9 ուսումնասիրությունների տվյալները և պարզել են, որ օրական 4 և ավելի գավաթ սուրճը 39 տոկոսով նվազեցնում է բերանի և կոկորդի քաղցկեղի զարգացման վտանգը: Այս հայտնագործությունն ունի կարևորագույն նշանակություն, քանի որ գլխի և կոկորդի քաղցկեղային հիվանդությունները կրում են ծանր բնույթ, իսկ հիվանդների ապաքինվելու հնարավորությունը չնչին է: Բացի այդ, նման եզրակացության գիտնականները հանգել են լայնամասշտաբ հետազոտությունից հետո:

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Սպորագրված է տպագրության՝ 24.09.2010 թ.:
"ГИТУТЮН" ("Наука")
газета НАН РА